Ժողովրդի համար միեւնույն է: Ձեր ժողովուրդը ճնշված է: Հայաստանի ժողովուրդը հիմա պոստտրավմատիկ սինդրոմ է ապրում, հատկապես՝ երիտասարդությունը: Ես վերջերս եմ եղել Հայաստանում, դա երեւում է: Հասարակությունը շատ դեպրեսիվ վիճակում է: Կա որոշակի ակտիվ զանգված, որը, սակայն, Հայաստանում եղանակ չի ստեղծում:

Կարդացեք՝ էջ 4

Մեծ թվով ուժերի մասնակցությունն իշխանության համար ունի ավելի կարեւոր նշանակություն, քան հիմնական քաղաքական մրցակիցներին վարկաբեկելն ու անվանարկելը կամ ընտրողներին մոտիվացիայից զրկելն է: Դա իշխանության կեղծ հաղթանակն օրինականացնելն ու լեգիտիմացնելն է, որ ընտրություններից հետո շնորհավորեն իրեն:

Կարդացեք՝ էջ 5



Եղել են տհաճ պահեր, երբ նախագահ Սահակաշվիլին անթույլատրելի հայտարարություններ էր անում երկրի նախագահի համար: 2009-ին նա հայտարարեց, որ Հայաստանի տնտեսությունն ազատ անկման մեջ է հայտնվել: Փառք Աստծո, այդ ժամանակներն արդեն անցյալում են, իսկ այդ մարդն էլ այնտեղ է, որտեղ որ պետք է լինի՝ բերդում:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 70 (4205), 30 ապրիլ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

ՀՀ ռազմարդյունաբերական կոմիտեի նախկին նախագահ, «Հայաքվե» միավորման անդամ Ավետիք Քերոբյանը, մեր տեղեկություններով, ընդգրկվել է «Դեմ եմ բոլորին» քաղաքական ուժի ցուցակում, որն ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել: Դեռ շաբաթներ առաջ տեղեկություն ունեինք, որ Քերոբյանը դուրս է գալիս «Հայաքվեից», բայց նա ո՛չ հաստատել, ո՛չ հերքել էր այդ տեղեկությունը՝ ասելով, որ սպասում է որոշ զարգացումների: Հիմա, երբ «Հայաքվեն» որոշել է չառաջադրվել, այլ աջակցել ընդդիմադիր ուժերին, ըստ ամենայնի՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը, Քերոբյանը վերջնական որոշում է կայացրել եւ մտել ցուցակ: Մեզ հետ զրույցում Ավետիք Քերոբյանն ասաց. «Երեւի թե գիտեք, թե ինչ է «Բոլորին դեմ եմ»-ը, եւ ինչ նշանակություն ունի այդ ցուցակը: Ընդամենը տեխնիկական միջոց է՝ ընտրություններին մասնակցելու, այդ ցուցակում որեւէ մեկը Աժ-ում պատգամավոր դառնալու մտադրություն, կարիք կամ հնարավորություն չունի»:

Իրավապահ մարմնից ստացված տեղեկատվությամբ, դեռեւս 2023 թվականին՝ Արցախի անկումից հետո, ՀՀ ԱԱԾ-ում, այսպես կոչված, արցախցիների ստորաբաժանում է բացվել, որտեղ աշխատանքի են տեղավորվել Արցախի անվտանգության ծառայությունում աշխատած եւ Հայաստան եկած պաշտոնյաները: Ասում են՝ հենց նրանց միջոցով էլ վերահսկում են արցախցի գործիչների եւ, առհասարակ, արցախցիների շարժերը, նրանք են տեղեկատվություն փոխանցում իշխանություններին, թե ինչ է կատարվում արցախյան շրջանակներում: Կանդազի գործում էլ է նման ներգրավվածություն եղել՝ հավաքագրել են բոլոր նրանց, ովքեր կարող էին հնարավոր շփումներ ունենալ Արթուր Ավետիսյանի՝ Կանդազի գործով:

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող վարույթի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել 10 տարի պաշտպանության փոխնախարար (2007-2017թթ.), ապա 2017-2020 թթ. արտակարգ իրավիճակների փոխնախարար աշխատած Արա Նազարյանին: Նա մի շարք զինվորականների հետ անցնում է մի քրեական վարույթով, որը վերաբերում է ՊՆ-ի կողմից բնակարաններ հանձնելուն: Պարզելու համար, թե կոնկրետ ինչի մասին է խոսքը, փորձեցինք կապվել Նազարյանի կամ նրա փաստաբանի հետ, սակայն չհաջողվեց: Վերջին տարիներին Նազարյանը հանրության տեսադաշտից անհետացել է, հայտնի չէ, թե այժմ ինչով է զբաղվում:

Հարց տվեցի՞ք

Երեկ, երբ ադրբեջանական պատվիրակությունը վայրէջք կատարեց «Զվարթնոց» օդանավակայանում, եւ պարզվեց, որ Ադրբեջանի փոխվարչապետ, Հայաստանում ծնված, մեծացած Շահին Մուստաֆաեւն է պատվիրակության ղեկավարը, որը նաեւ ցանկություն է հայտնել այցելել իր ծննդավայր՝ Նոյեմբերյանի շրջանի Ջուջեւան գյուղ: Մեր լրագրողը կապվեց Ջուջեւանի վարչական ղեկավարի հետ եւ հետաքրքրվեց, թե գիտե՞ն այդ այցի մասին, եւ ի՞նչ է ուզում տեսնել հարեւան երկրի փոխվարչապետը Ջուջեւանում: Պարզվեց՝ այս գյուղում մի ադրբեջանական ընտանիք է միայն ապրելիս եղել սովետական տարիներին՝ Մուստաֆաեւի ընտանիքը, որը 1991-92 թվականներին խաղաղ ու անվնաս հեռացել է գյուղից, իսկ նրանց ապրած տունը գյուղում կանգուն է: Գյուղապետի խոսքը տպավորիչ էր. «Էդ մի տունն է ու մինչեւ հիմա մնում է, մենք հո գազաններ չե՞նք, որ ավերենք»: Ահա, հենց այստեղ է հայի ու ադրբեջանցու տարբերությունը: Հայը գյուղի մի տուն անգամ չի ավերի, իսկ ադրբեջանցին մեր նորակառույց շենքերն ու վանքերն է ավերում, հազարամյա կոթողները նույնիսկ չի ափսոսում, Վազգեն Սարգսյանի արձանն է պղծում, սպառնում է տատուպապի հուշարձանը քանդել, ջնջում է հայի հետքը հազարամյակներով հայկական բնակավայր հանդիսացած Արցախից: Հիմա, երբ այս Մուստաֆաեւը գալիս է Հայաստան՝ մեծ պատվիրակությամբ, պատվոհարգանքով ընդունում են, անվտանգության ուժեղացված ծառայություն են տրամադրում, փողոցներ են փակում, որ խցանումների մեջ հանկարծ չկանգնեն թանկագին հյուրերի մեքենաները, տանում են Աղվերան՝ հանդիպեցնում հայ գործարարների հետ, հետո սահմանազատման հանձնաժողովի նիստ են անում, գոնե մեկը այդ հարցը տալի՞ս է նրան. այ բարբարոս, բա եթե խաղաղություն է, սահմանազատում, առեւտրաշրջանառություն, ինչո՞ւ եք հայկական վանքերն ավերում:

Ապրիլի 26-ին Տավուշի մարզ այցելության ժամանակ իր լայվում Նիկոլ Փաշինյանը, ավտոմեքենա վարելով եւ Կիրանցը ցույց տալով, ասում էր. «Էս էլ նոր ճանապարհն ա Կիրանցի, որը մենք ռեկորդային կարճ ժամանակում կառուցեցինք: Էս էլ՝ էսպես պատի նման մի բան, ես միջնորդեցի, որ հանրապետության նախագահը պետական պարգեւի արժանացնի շինարարներին, եւ նրանք արժանացան պետական պարգեւի՝ կարճ ժամանակաշրջանում էս խնդիրը կատարելու համար»: Հետո ասաց. «Սա էլ Կիրանցի հայտնի պատն ա, որը մեր անկախության եւ պետության կարեւոր սիմվոլներից է»: Իրականում, Կիրանցի պատը ՀՀ տարածքը թշնամուն հանձնելու, ադրբեջանական դրոշը գյուղի կողքը տնկելու, գյուղը երկու մասի բաժանելու, բնակիչների անվտանգությունը ադրբեջանցի զինվորի հայեցողությանը թողնելու խորհրդանիշն է:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌԵԱԿՑԻԱՆ ԵՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Ադրբեջանական պատվիրակության՝ Հայաստան այցից երեկ անակնկալի էին եկել նաեւ ՔՊ-ական պատգամավորները: Նրանք նախապես ոչինչ չեն իմացել ո՛չ այցի, ո՛չ էլ, առավել եւս՝ օրակարգի մասին, տեղեկացել են, երբ վաղ առավոտյան ադրբեջանական մամուլը գրեց, որ «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք է կատարել ադրբեջանական օդանավը, եւ ադրբեջանական պատվիրակություն է ժամանել Երեւան: Ավելի ուշ ադրբեջանական լրատվամիջոցները գրեցին, որ Ադրբեջանի պատվիրակությունը գլխավորում է փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը, որը Միհեր Գրիգորյանի հետ միասին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համանախագահն է: Սակայն ավելի ուշ քաղաքական կուլիսներում խոսում էին, որ այցը ոչ թե սահմանազատման հարցերին է վերաբերում, այլ 300 հազար ադրբեջանցիների՝ Հայաստանում բնակեցնելուն: Տեղեկությունների համաձայն, Մուստաֆաեւի հետ ադրբեջանցի գործարարներ էլ են ժամանել Հայաստան, եւ Աղվերանի «Աբրիկոտ» ռեստորանում հայ կոլեգաների հետ հանդիպում է կայանալու՝ երկկողմ տնտեսական հարցերի վերաբերյալ: Հայկական կողմից հիմնականում այն գործարարներն են եղել, ովքեր վերջերս մասնակցում էին Փաշինյանի հետ նախաճաշին: Սա ավելի շատ ստուգողական այց է, փորձում են հայ ժողովրդի ռեակցիան ստուգել, այլ կերպ ասած՝ ադապտացնել հետագայում ադրբեջանցիների հետ համակեցության մտքին: Խոսվում է, որ գործընթացը կմեկնարկի ընտրություններից հետո, եթե Փաշինյանը վերընտրվի:

ՆԱՄԱԿ

ԿԸՀ-ԻՑ ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՄԵԶ ՎՐԱ ՀՈՒՅՍ ՉԴՆԵՔ

Ընտրությունները՝ խորհրդարանական թե տեղական ինքնակառավարման, արտահերթ թե հերթական, երբ մոտենում են, բոլորի ուշադրությունը հառնում է ԿԸՀ-ին, քանի որ ԿԸՀ-ն է ընտրությանը մասնակցող ուժերին, թեկնածուներին գրանցում, ԿԸՀ-ն է մանդատներ բաշխում, հանձնում:

Հետեւաբար, ծագում է հարց. եթե ընտրությանը մասնակցելու հայտ ներկայացրած որեւէ ուժի (թեկնածուի) նախընտրական ծրագրում ներառված են ՀՀ ինքնիշխանության դեմ կամ ՀՀ սահմանադրությունը ոտնահարող դրույթներ, ԿԸՀ-ն իրավասություն ունի՞ նման ուժին կամ անհատին չգրանցել: ՀՀ Ընտրական օրենսգրքում այդ հարցը բաց է մնում, օրենսգրքում չկա դրույթ, որ ԿԸՀ-ին լիազորի՝ չգրանցել կամ ընտրապայքարից հեռացնել որեւէ ուժի՝ նախընտրական ծրագրի պատճառով: Մյուս կողմից, չկա տրամաբանություն այն բանում, որ որեւէ քաղաքական ուժ գրանցվի, եւ նրան թույլ տրվի ընտրության մասնակցել, եթե այդ ուժի նախընտրական ծրագիրը բռնություններ է ծրագրում ու ազդարարում եւ ուղիղ ոտնահարում է ՀՀ սահմանադրությունը:

Սա այն է, ինչ 2026-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ անում է ՔՊ-ն: Գուցե ոչ ուղիղ տեքստով, բայց ըստ էության ՔՊ-ն իր նախընտրական ծրագրում արձանագրել է, թե ծրագրում է աշխարհասփյուռ հայությանը ուծացնել, հայության տարբեր հատվածների միջազգայնորեն ճանաչված իրավունքները ոտնահարել, հայապահպանությանը նպաստելու փոխարեն հայերի ազգային ինքնապահպանման կռվանները ոչնչացնել, Եկեղեցու դեմ ասպատակությունը շարունակել: Մնում է եւս մի քանի օր սպասել եւ տեսնել, թե արդյոք ՔՊ-ն կհեռացնի՞ հակաօրինական եւ հակահայ հատվածներն իր ծրագրից՝ այն ԿԸՀ կայքում հրապարակելուց առաջ, թե՞ կթողնի: Դրանից հետո կողմնորոշվել, թե ինչ կարելի է անել:

Առայժմ, առանց որեւէ ուժ նշելու եւ որոշակիացման, զուտ տեսական հարց ուղարկեցինք ՀՀ ԿԸՀ, նախագահ Վահագն Հովակիմյանին՝ խնդրելով պաշտոնական պատասխան հետեւյալ հարցին.

«1. Եթե ՀՀ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական ծրագրում ներառված են բռնության կոչեր կամ ատելության խոսք, կամ ՀՀ ինքնիշխանության դեմ դրույթներ, կամ ՀՀ սահմանադրությունը ոտնահարող դրույթներ, արդյո՞ք ԿԸՀ-ն ունի մեխանիզմ՝ դրանց հակազդելու, եւ ի՞նչ հասանելի միջոցներ կան հակազդելու»:

Հարցն ուղարկել էինք ապրիլի 23-ին, հաջորդ աշխատանքային օրը պատասխանը ստացվեց՝ ԿԸՀ նախագահի ստորագրությամբ, որն ամբողջությամբ ստորեւ մեջբերում ենք.

«Հարգելի՛ Լուսինե Պետրոսյան,

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Ազգային ժողովի եւ համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրենց նախընտրական ծրագրերը կարող են հրապարակել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: (…)»:

Ընտրական օրենսգրքի 85-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր համացանցային կայքում հրապարակում է կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները եւ նախընտրական ծրագրերը»:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է իր համացանցային կայքում հրապարակել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը, եթե ներկայացվել են: Հարկ ենք համարում նշել, որ Ընտրական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության (կուսակցությունների դաշինքի) դիմումին կից: Նշված ցանկում նախընտրական ծրագիրը նշված չէ, եւ այն չներկայացնելը որեւէ իրավական հետեւանք չի առաջացնում:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը հրապարակվելու են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում այն տեսքով, ինչ տեսքով ներկայացվել են: Որեւէ պահանջ՝ բովանդակային կամ ձեւական, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերին ներկայացված չէ: Ընտրական մարմիններին էլ վերապահված չէ լիազորություն՝ քննարկման առարկա դարձնել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերը:

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերում կամ այլ նյութերում հնարավոր քրեական պատասխանատվության հանգեցնող կոչերն ու դրույթները ենթակա են գնահատման իրավապահ մարմինների կողմից եւ կարող են հանդիսանալ վերջիններիս կողմից իրականացվող վարույթների առարկա»:

ԿԸՀ պարզաբանումից հետեւում է, որ (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերում հակասահմանադրական դրույթներ ներառելը կարող է քննության առարկա դառնալ, բայց ոչ ԿԸՀ հարթությունում, այլ՝ իրավապահ համակարգի: Իսկ այն, որ այսօր իրավապահ համակարգը Փաշինյանի կրնկի տակ է, կարող է ՔՊ-ին չփրկել, քանի որ ընտրություններում տապալվելուց հետո ՔՊ-ի դեմ ցանկացած նախընթաց հաղորդման կամ գործի էլ կարող է ընթացք տրվել եւ ՔՊ իշխանազրկված անդամների համար հետեւանքներ ունենալ: Հետեւաբար, ՔՊ-ում ճիշտ կվարվեն, եթե իրենց նախընտրական ծրագրից Հայաստանյայց առաքելական եկեղեցու դեմ ուղղված հակահայ եւ սահմանադրություն ոտնահարող դրույթները հեռացնեն, նոր ծրագիրը ԿԸՀ կայքում հրապարակեն՝ իրավական գործընթացներում չհայտնվելու համար:

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՊՈՒՏԻՆԻ ՎՐԱ ՓՈՐՁՈՒՄ ԷՐ ՄԱՏ ԹԱՓ ՏԱԼ, ԱՅՊՔԱՆԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ ԵՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ

Ռուսաստանում արգելել են «Ձերմուկ» հանքային ջրի խմբաքանակի վաճառքը: Խոսքը 338 հազար շիշ «Ձերմուկ» հանքային ջրի մասին է, ՌԲԿ-ին հայտնել է Առաջադեմ տեխնոլոգիաների զարգացման կենտրոնի (մակնշման օպերատոր) ղեկավարի տեղակալ Ռեւազ Յուսուպովը: Դրանից առաջ էլ ռուսական կողմն արգելել էր Պռոշյանի կոնյակի գործարանի ռուսաստանյան մասնաճյուղի արտադրության լիցենզիան: Մինչ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը եռանիշ տնտեսական աճի ու մեծագույն տնտեսական ձեռքբերումների, հայ-ռուսական ջերմ հարաբերությունների մասին են խոսում, ռուսական կողմն արդեն բացահայտորեն փորձում է խոչընդոտել հայկական արտադրանքի ներկրումը Ռուսաստան, ինչը մեծ հարված է առաջին հերթին Հայաստանի տնտեսությանը: Ֆինանսների նախկին նախարար **Վարդան Արամյանը** «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնում է թեմային. «Ես դեռ երկու շաբաթ առաջ էի կանխատեսել, որ նման բան կարող է լինել: Երբ Հայաստանի վարչապետն ու ՌԴ նախագահը հանդիպում ունեցան, բավականին շատ տեսակետներ նետվեցին դաշտ, ոմանք հրճվեցին ու ուրախացան Փաշինյանի հայտարարություններից, իսկ շատերն էլ, ինձ նման՝ ոչ: Ես, իհարկե, քաղաքական վերլուծաբան չեմ, սակայն գիտեմ, որ երկրների ղեկավարներն ունենում են հանդիպումների բաց եւ փակ մասեր: Բաց մասերը սովորաբար կոռեկտ ու կոկիկ են լինում, բարի բառամթերքով, իսկ փակ մասում հիմնականում քննարկվում են կնճռոտ հարցեր, բայց մենք տեսանք, որ բավականին բարդ ու կնճռոտ հարցեր Վլադիմիր Պուտինը ներկայացրեց բաց մասում: Որոշ շրջանակներ Հայաստանում ուրախացան, ոգեւորվեցին, ասացին՝ տեսա՞ք, թե ոնց Պուտինի պորտը տեղը դրեց Փաշինյանը, եւ այսպես շարունակ, բայց իրականում քաղաքականության մեջ անթույլատրելի է էմոցիաներին տրվելը՝ առանց հետեւանքների մասին մտածելու: Ցանկացած խոսք, ցանկացած հայտարարություն ու ժեստ, երբ արվում է երկրի ղեկավարի կողմից, անպայմանորեն հետեւանք է ունենում երկրի վրա: ՔՊ-ական միջավայրերում ասում են, որ եթե մենք անկախ ենք, ուրեմն Փաշինյանն այդպես պետք է վարվի, դա մեր անկախության գինն է եւ այլն: Անգամ եղան ՔՊ-ականներ, որ պնդեցին, թե պատրաստ են 600 դոլար վճարել գազի սակագնի համար՝ դա անկախության գինն է: Մեծ-մեծ խոսքեր ասելը հեշտ է, պետք է զգալ կաշվի վրա եւ հասկանալ, թե այդ ամենը որքանով է տանելի: Հայաստանը Ռուսաստանից կախվածության մեջ է:

Իհարկե, վատ է, երբ մեծ երկրներից կախվածության մեջ ես լինում, որեւէ մեկը դա չի հերքում, սակայն դա փաստ է: Առեւտրային կապի մասին եթե խոսենք, ապա միայն 2025 թվականին ունեցել ենք 21 միլիարդ դոլարի չափով առեւտրային շրջանառություն: Եթե խոսենք արտահանման մասին, ապա միլիարդների արտահանում ենք ունեցել ՌԴ, էլ չասենք, որ Ռուսաստանի միջոցով արտահանում ենք նաեւ երրորդ երկրներ, օրինակ՝ Էմիրություններ: Ամենամեծ առեւտուրը Հայաստանն անում է Ռուսաստանի հետ, ինչպե՞ս կարելի է առանց այդ ամենը հաշվի առնելու անել քայլեր: Պետք է ամեն խոսք լինի կշռադատված: Իսկ ի՞նչ է անում Հայաստանի իշխող ուժը՝ Ռուսաստանի դեմ տեղեկություններ է տարածում, գնում է՝ Եվրապառլամենտում հյուսիսից եկող վտանգների մասին է խոսում եւ Պուտինի վրա փորձում է մատ թափ տալ: Այդքանից հետո ի՞նչ են ակնկալում: Այնպես չէ, որ ես Ռուսաստանի փաստաբանն եմ կամ նրանց սրբադասում եմ, ոչ, բայց պատկերացրեք՝ մի հարեւան ունեք, որին ամեն կերպ աջակցում եք, հաց եք տալիս, ջուր եք տալիս, իսկ նա ամեն անգամ գնում է ձեր թշնամիների մոտ, չարախոսում է ձեր մասին, նման հարեւանի հետ դուք ինչպե՞ս կվարվեք: Երբ գնում ենք Եվրոպա, մատ ենք թափ տալիս Ռուսաստանի վրա, երբ անդադար հակառուսական հայտարարություններ ենք անում, պետք է անպայման հաշվի առնել, որ մի օր էլ Ռուսաստանը կարող է պատժել մեզ»:

Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԺԱՆԴԱՐՄ ՏԻԿԻՆԸ, ՈՐԻՑ ԴԺԳՈՂ Է Ե՛Վ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ, Ե՛Վ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիկոլ Փաշինյանի նախկին օգնական, ներկայում գլխավոր դատախազի պաշտոնը զբաղեցնող, բայց վարչապետի օգնականի կարգավիճակից այդպես էլ դուրս չեկած Աննա Վարդապետյանը երեկ ժանդարմի կեցվածքով եկավ խորհրդարան, չպատասխանեց լրագրողների եւ ոչ մի հարցի ու բերանը խուփ՝ փախուստի դիմեց: Նրան ուղեկցող հինգ «ախրաննիկները», Վարդապետյանին օղակի մեջ վերցրած, բերեցին մինչեւ պետահրավական հարցերի հանձնաժողովի աշխատասենյակ եւ նույնկերպ էլ հեռացրին խորհրդարանի շենքից:

Գլխավոր դատախազ տիկինը խորհրդարան էր եկել դատախազության 2025 թվականի գործունեության մասին հաղորդումը ներկայացնելու: Նա շուրջ 20 րոպե, առանց դեմքի միմիկան փոխելու, միալար տոնով ներկայացնում էր իր ղեկավարած ոլորտի «հաջողությունները»: Հատկապես կենտրոնացավ ապօրինի գույքի բռնագանձման կամ, ինչպես ՔՊ-ականներն են ասում, թալանը վերադարձնելու գործերին, խոսեց կալանքի դեպքերի եւ բանակում մահերի դեպքերի նվազման վիճակագրության մասին, ապա նույն՝ մոմե դեմքով պատասխանեց պատգամավորների հարցերին: Այդ՝ սֆինքսի, թե գեստապոյականի կեցվածքից նրան կարողացավ փոքր-ինչ դուրս բերել ընդդիմադիր պատգամավոր **Գեղամ Մանուկյանը**, երբ մեղադրեց Բագրատ սրբազանի գործով ԱԺ ամբիոնից սուտ ու կեղծիք տարածելու մեջ: «Տիկին Վարդապետյան, Ձեր զեկույցում հպարտանում եք, որ խափանման միջոց կալանքը քիչ է կիրառվել: Քանի՞ կոպեկի արժեք ունի այդ Ձեր հաշվետվությունը. մենակ Դավիթ Մինասյանի կալանավորման ու խոշտանգման դեպքը բավարար է»,- ասաց նա եւ շարունակեց. «Մի բան է ինձ հետաքրքրում՝ ի՞նչ խղճով եք եկել Ազգային ժողով, անցած տարի Դուք ստով, կեղծիքով մոլորեցրել եք բոլոր պատգամավորներին եւ կալանքի եք տարել մեր գործընկեր Սարգսյան Արթուրին, սուտ փաստեր եք հրապարակել: Ասել եք, որ ինչ-որ աստղիկներ կան, որոնք անիվներն են ծակել, հիմա դատն է գնում՝ չկա այդ փաստը: Խոսում էիք գյուլլելու մասին, պարզվում է, որ սուտ է, կեղծիք է, չկա նման բան, լրիվ մանիպուլացրել եք»:

Եվ Մանուկյանը Վարդապետյանին փոխանցեց կալանքի տակ գտնվող Բագրատ սրբազանի հարցերը. «Ինչի՞ն է վերաբերում հանրահայտ՝ երկու հոգու գյուլլելու եւ 15 հոգու բանտ դնելու այդքան չարչրկված արտահայտությունը, արդյոք այն առնչություն ունի՞ Ձեր բնութագրած ահաբեկչության հետ, որն այնքան մեծ սիրով ու ջանասիրությամբ դարձրիք այս գործի առանցքը»:

Մանուկյանի ելույթը Աննա Վարդապետյանի սփրթնած դեմքին փոքր-ինչ վարդագույն ավելացրեց, տիկինն անհարմար շարժումներ անելով՝ արձագանքեց. «Հուսով եմ՝ ձեր օրակարգը կարողացաք իրականացնել այսօր եւ ձեր բոլոր վիրավորանքները, որոնք ձեր հարցի անվան տակ թաքցրել եք: Ինձ համար պարզ է նպատակը՝ դուք հիմա ուզում եք, որ ես մոտավորապես նույն ոճով պատասխանեմ ձեզ, ես իջնեմ այդ մակարդակի, սկսեմ վիրավորել ձեզ, եւ դառնա այն, ինչի մեջ դուք շատ հմուտ եք, բայց ես նման բան չեմ արել ու չեմ անելու: Ո՛չ վիրավորելու եմ, ո՛չ էլ համբերությունից դուրս եմ գալու, ուրիշ մեթոդ գտեք: Մեղադրյալ Գալստանյանը, եթե այդքան ուզում է, որ ապացույցները հետազոտվեն, ուրեմն թող չխոչընդոտեն, անիմաստ միջնորդություններ չներկայացնեն դատարանին, թույլ տան, որ գործը սկսի դատաքննության փուլ անցնել, եւ իրենք իրենց բոլոր հարցադրումները ներկայացնեն: Եվ ես չեմ պատկերացնում, որ որեւէ մեղադրյալի հարցաքննություն Ազգային ժողովում պետք է քննարկվի: Մեղադրյալի հարցադրումները քննարկվում են դատաքննության ընթացքում: Կյանքը ցույց է տալիս, որ շատ հաճախ այդ մեղադրյալները չեն ուզում, որ գործը հասնի դատաքննության, որովհետեւ չեն ուզում, որ ապացույցները դատարանում հետազոտվեն, դրա օրինակները կան»:

Եվ ոչ մի հակափաստարկ չհնչեց՝ ի պատասխան պատգամավորի հնչեցրած ծանրագույն մեղադրանքներին, ի լուր աշխարհի ստած տիկինը, պարզվեց՝ խոցվել է Մանուկյանի բնութագրումներից: «Տիկին Վարդապետյան, Դուք եք մեզ վիրավորել՝ սուտ տեղեկություններ տալով, Դուք Սարգսյան Արթուրին խայտառակ եք արել, Բագրատ սրբազանի հեղինակության հետ եք խաղացել: Դատաքննության հետ կապված՝ մի հատ եկեք դատարան, տեսեք: Այնտեղ ժամանակ շահելու հարց չկա, 18 արդարի տարել նստեցրել եք դատարանի դահլիճում ու ասում եք՝ շատ արագ: Իրենք են ամենաշահագրգիռը, որ դատաքննության ժամանակ այդ փաստերը մեջտեղ գան, որովհետեւ կպարզվի, որ քննչական մարմինները կեղծիք են արել, գաղտնալսել են, մոնտաժել են: Դուք էլ ԱԺ ամբիոնից ՔՊ-ին համոզել եք, որ Սարգսյան Արթուրին պետք է կալանավորել»,- արձագանքեց Գեղամ Մանուկյանը:

Ընդդիմադիր **Լիլիթ Գալստյանն** էլ հետաքրքրվեց Հայ առաքելական եկեղեցու դեմ սանձազերծված հակասահմանադրական գործընթացից եւ Եկեղեցու դեմ արշավից: «Ինչո՞ւ չեք տեսնում այստեղ հանցագործություններ, որոնք ավելի քան ակնհայտ են»,- դիմեց նա դատախազին՝ հիշեցնելով ՔՊ նախընտրական ծրագիրը, որտեղ կա դրույթ՝ Վեհափառ հայրապետին հեռացնելու մասին: Բացի այդ, Գալստյանը նկատեց, որ Եկեղեցու դեմ քաղաքական արշավին միացել է նաեւ իրավապահ համակարգը, եւ հարցրեց՝ երբ Մայր Աթոռի դռները բարբարոսաբար ջարդում էին, ինչո՞ւ վարույթ չհարուցեցիք: Վարդապետյանը նույն սառնասրտությամբ անհոդաբաշխ մտքեր արտանետեց, թե դատախազությունը քրեական վարույթից դուրս գնահատականներ չի տալիս: «Դրանից հետո գործը գնում է հրապարակային դատաքննության, եւ մեր բոլոր փաստարկները հրապարակային դատաքննությամբ ներկայացվում են, քննարկվում են, դատարանի կողմից որոշումներ են կայացվում»:

«Ձեզ չի՞ հետաքրքրում, որ Փաշինյանի ներվերի հետ խաղալը կարող է դառնալ պատճառ, որ մարդիկ հայտնվեն ԱԱԾ պադվալում»,- նրան հարց ուղղեց պատգամավոր **Արթուր Խաչատրյանը**, հիշեցնելով Փաշինյանի՝ խորհրդարանում ընդդիմադիրներին սպառնալու դեպքերը: Սակայն տիկինն անվրդով նկատեց, թե քաղաքական հայտարարությունները չի մեկնաբանում: Ի դեպ, տեղեկություններ կան, որ ՔՊ-ում էլ առանձնապես գոհ չեն տիկնոջ գործունեությունից: Երեւի կարծում են, որ կարող էր ավելի շատ մարդ նստեցնել եւ ավելի շատ մեղադրանք առաջադրել իրենց ընդդիմախոսներին: Բայց ակնհայտ է, որ ԱԺ լիագումար նիստի ընթացքում չի բացառվում, որ ոչ հաճելի ելույթներ կհնչեն: Արփի Դավոյանն անգամ փոքրիկ անոնս արեց՝ դժգոհելով, թե Մոնումենտի տների մասով գործը տեղից չի շարժվում, թալանը պետությանը չի վերադարձվում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ՄՏԱԾՈՒՄ Է՝ ԱՐԺԵ՞Ի ԳՈՒՄԱՐ ՏԱԼ «ՊՐԱՎԱԼԻ» ՄԱՏՆՎԱԾ ՈՒԺԻՆ

«Հրապարակի» զրուցակիցը ռազմական փորձագետ **Դավիթ Զամալյանն** է:

- Ադրբեջանի պատվիրակությունը՝ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի գլխավորությամբ, երեկ անսպասելիորեն ժամանեց Երեւան. ադրբեջանական ինքնաթիռն ուղիղ վայրէջք կատարեց «Զվարթնոց» օդանավակայանում: Հայաստանյան եւ ադրբեջանական կողմերը դեռեւս չեն հստակեցրել, թե այդ այցն ինչ նպատակ ունի: Ըստ Ձեզ՝ կողմերն ի՞նչ հարցեր կարող են քննարկել, եւ, ի վերջո, այս այցը որքանո՞վ է տեղին այս փուլում՝ ընտրությունների շեմին:

- Ես վստահ եմ, որ սա այն ցայտնոտի նշանն է, որն առկա է թե՛ Նիկոլի շրջապատում, թե՛ Նիկոլի տերերի շրջանակներում: Նրանք լավ են հասկանում, որ Նիկոլը վերարտադրվելու շանս գրեթե չունի: Ինչու «գրեթե», որովհետեւ անելու են ամեն հնարավոր բան, որպեսզի Նիկոլի իշխանության կյանքը ձգեն: Կուսակցությունների գրանցմանն են խոչընդոտելու, չգիտես էլ ինչեր են անելու: Բայց այս սցենարն այն չէ, ինչ ակնկալում էին այն աշխարհաքաղաքական կենտրոնները, որոնք Նիկոլ Փաշինյանի թիկունքին կանգնած են: Վստահ եմ, որ Ադրբեջանի փոխվարչապետը եկել է իրավիճակին ծանոթանալու, հասկանալու, թե ինչ առարկայական օգնություն կարելի է տրամադրել Նիկոլին, որպեսզի նա ինչ-որ կերպ լրացուցիչ ձայներ բերի՝ խաղաղություն խաղալուն զուգահեռաբար: Հիմա հարց կառաջանա, թե ինչու են այդ դեպքում հրապարակայնացնում այս այցը: Պատասխանը շատ պարզ է. որպեսզի հայ հասարակության մոտ տպավորություն թողնեն, թե իբրեւ կողմերն արդեն խաղաղության են հասել, այժմ այն վիճակում են երկու երկրների հարաբերությունները, այնպիսի բարձր մակարդակի վրա, որ արդեն Ադրբեջանից բարձրաստիճան պաշտոնյաներ են հյուրընկալում մեզ մոտ: Իրականում, Նիկոլին փորձում են ավելի առարկայական կերպով օգնել: Քննարկելու են այդ հարցերը: Չեմ բացառում, որ այս փուլում կարող են նաեւ մի քանի հայ ռազմագերի վերադարձնել Հայաստան, որպեսզի դարձյալ հանրության աչքին թոզ փչեն: Անձնագրերից հեռացնում են Արարատ լեռան պատկերը, թվում է, թե ընդհանրապես այդ ապազգային օրակարգը՝ գոնե այս նախընտրական փուլում, պետք է լիներ քողարկված, սակայն՝ ոչ, Նիկոլ Փաշինյանը բացահայտորեն է գործում եւ իսկապես մնացել է թուրք-ադրբեջանական տանդեմի աջակցության հույսին: Թուրքերը եւ Արեւմուտքը ամեն գնով փորձում են Նիկոլին օգնել, բայց բոլորն են հասկանում, որ եթե մի ղեկավար պատրաստ է դավաճանել իր ժողովրդին ու երկրին, ինչ-որ մի պահի կարող է նաեւ դավաճանել իրենց, ուստի իրավիճակը նմանվում է առեւտրի: Նրանք Նիկոլին ասում են՝ հենց հիմա, մինչեւ վերարտադրվելդ, պետք է միանգամից քայլառքայլ ի ցույց դնես, թե ինչ ես անելու վերարտադրվելուց հետո: Այս ամենի նպատակն այն է, որ Նիկոլը վերարտադրվելուց հետո չկարողանա պրոցեսներից խուսափել: Կա մտավախություն, որ նա կարող է ինչ-ինչ հարցերում նշել, որ այս կամ այն հարցի հետ կապված՝ ժողովուրդը դեմ է, ուստի նրան հիմա ստիպում են միանգամից դիմել որոշակի քայլերի. նա փակուղու մեջ է ու նահանջի տեղ այլեւս չունի: Բացահայտ հպատակության նոպաները հենց դրա մասին են վկայում: Ի դեպ, Եվրոպայում, մասնավորապես՝ Բրյուսելում, մեծ կասկածներ ունեն, որ Նիկոլը կարող է այս ընտրություններում պարտվել: Նրանք խոստացած ֆինանսավորումը չեն տվել դեռ, քանի որ ռիսկեր կան, որ Նիկոլը կարող է ձախողվել: Արեւմուտքը մտածում է՝ արժե՞ գումարներ հատկացնել «պրավալի» մատնված ուժին: Արդյունքում ստացվում է, որ Փաշինյանի հույսն ադրբեջանական պրոպագանդան է, ներառյալ՝ Թուրքիայի աջակցությամբ: Այս ամենը հուշում է մի բանի մասին եւս. Նիկոլն արդեն վաղուց լեգիտիմ ղեկավար չէ եւ կախված է փրփուրներից:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Քաղաքագետ, արեւելագետ **Կարինե Գեւորգյանը** քիչ հավանական է համարում, որ Ուկրաինայի նախագահ Զելենսկին կայցելի Հայաստան՝ մասնակցելու Հայաստան-ԵՄ գագաթնաժողովին, քանի որ հայտնի չէ, թե ինչպես Հայաստանում կապահովեն Զելենսկու անվտանգությունն այս փուլում, երբ, նրա խոսքերով, «Էփշտեյն կոալիցիա-Իրան» հարաբերությունները գնալով ավելի են սրվում, ներգրավելով նորանոր երկրներ: «Այնքան

ԵԹԵ ԶԵԼԵՆՍԿԻՆ ԳԱ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄՈՍԿՎԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՇԱՏ ԿՈՇՏ ԿԼԻՆԻ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«եթե»-ներ կան, որ գուշակել, թե ինչ կարող է կատարվել, կգամ արդյոք Զելենսկին, եւ ինչպես Հայաստանում կապահովեն նրա անվտանգությունը, արդյոք դա չափազանց ռիսկային չէ, եւ նա չի հրաժարվի վերջին պահին. այստեղ այնքան «եթե»-ներ կան, որ մեկնաբանել անգամ չարժե»,- ասում է քաղաքագետը «Հրապարակի» հետ զրույցում:

- Զելենսկու այցը կանդրադառնա՞ Իրանի հետ հարաբերությունների վրա, այնտեղ սրացնո՞ւմ կլինի:

- Անկասկած: Որովհետեւ Ուկրաինան հայտարարեց, որ հաղթել է Իրանին եւ հանդիսանում է հակաիրանական կողմ: Իհարկե, այս իմաստով Զելենսկու մասնակցությունը ՀՀ-ԵՄ գագաթնաժողովին անուղղակի հաստատում է, որ Երեւանն Իրանից հեռանում է, չնայած այն բոլոր գեղեցիկ խոսքերին, որոնք արտասանում էին հայ դիվանագետները Թեհրանում եւ Երեւանում կայացած հանդիպումների ժամանակ: Սա, իհարկե, ուշագրավ պահ է: Բացի դա, հասկանալի է, որ Զելենսկու լեգիտիմությունը խիստ սպեցիֆիկ է, դիտարկվում է ակտուալ ռեժիմում, եւ ես կասեի՝ նա եվրոպական կոալիցիայի գեներալ-գուբերնատորն է բուն Ուկրաինայում, որի սուվերենությունը զուտ ֆորմալ բնույթի է: Փաստացի մենք հասկանում ենք, որ Ուկրաինայի սուվերենությունը համարյա զրո է, ոչ ամբողջությամբ՝ մասամբ: Կան որոշակի պահեր, որոնք պետք է հաշվի առնվեն, բայց դա կախյալ երկիր է, եւ տվյալ դեպքում ի՞նչ պետք է անի Զելենսկին: Նրան առանձնապես չեն հետաքրքրում Հայաստանի ընտրությունների արդյունքները, նա այլ հոգսեր ունի, նա ուզում է պարզապես երեւալ այդ միջոցառման ժամանակ եւ դրանից օգտվել՝ սեփական անձի լեգիտիմացիայի հերթական փուլի համար:

- Այո, Մոսկվայի դիրքորոշումը շատ կոշտ կլինի: Սկաբեեւան եւ մյուս մեկնաբանները կխոսեն այն մասին, որ հայկական ղեկավարությունը ցույց է տալիս լոյալության բացակայություն Մոսկվայի հանդեպ: Ես, իհարկե, չեմ պատրաստվում պաշտպանել ՀՀ ղեկավարությանը, դա իմ խնդիրը չէ, թող նա ինքն իրեն պաշտպանի, բայց պետք է ընդունել, որ նա իրեն ավելի զուսպ է պահում, քան Ադրբեջանը, որին եւ Օվերչուկը, եւ Մատվիենկոն այդքան գովում են: Ես իմ տելեգրամ ալիքում գրել եմ, որ Օվերչուկը կոչ արեց ռուսաստանցի բիզնեսմեններին՝ ներդրումներ անել Ադրբեջանի տնտեսության մեջ, ու բառացիորեն մի քանի օրից Ադրբեջանն Ուկրաինայի հետ համաձայնագիր կնքեց՝ Ադրբեջանի տարածքում զենք-զինամթերքի համատեղ արտադրության մասին: Եվ կներեք, բայց անհարմար եմ զգում հարցնել. հիմա Ռուսաստանի բիզնեսն էլ է մուծվելու դրա համար: Ասել կուզեմ, որ Մոսկվան էլ երկակի ստանդարտներ ունի, երկակի մոտեցումներ՝ պաշտոնական մակարդակում: Եվ այս իմաստով, չլինելով ՀՀ ղեկավարության պաշտպանը, ուզում եմ ասել՝ իսկ ի՞նչ անի Փաշինյանը, եթե Մոսկվան էլ է երկակի ստանդարտներ կիրառում: Փաշինյանը դա չի կարող չտեսնել:

- Նա առնվազն պետք է հետեւի իր ժողովրդի տրամադրություններին:

- Իսկ ժողովրդի համար այսօր միեւնույն է: Ձեր ժողովուրդը ճնշված է: Հայաստանի ժողովուրդը հիմա պոստտրավմատիկ սինդրոմ է ապրում, հատկապես՝ երիտասարդությունը: Ես վերջերս եմ եղել Հայաստանում, եւ դա երեւում է: Հասարակությունը շատ դեպրեսիվ վիճակում է: Կա որոշակի ակտիվ զանգված, որը, սակայն, Հայաստանում եղանակ չի ստեղծում:

- Իրավիճակը բարդանում է նաեւ նրանով, որ Զելենսկին Ադրբեջանի դաշնակիցն է: Հայաստանում նրա հանդեպ երկակի վերաբերմունք կա:

- Այո, ես անկեղծ կլինեի՝ իրավիճակն Ադրբեջանի ներսում, որքան հասկանում ենք, ամենեւին էլ քաղցր չէ, ինչպես վստահեցվում է պաշտոնապես: Դա Պոլիշինելի գաղտնիք է (գաղտնիք, որի մասին բոլորը գիտեն՝ Ս. Ս.): Երկիրը բարդ եւ կախյալ վիճակում է գտնվում:

- Ինչպիսի՞ն կլինի Մոսկվայի վերաբերմունքը, եթե Զելենսկին գա Հայաստան. սրա հետ կապված՝ մեզ մոտ բացասական սպասումներ կան:

- Ձեր կարծիքով, ինչքա՞ն հեռու կգնա Ռուսաստանը՝ Հայաստանի հանդեպ տնտեսական սահմանափակումներ, խստացումներ կիրառելու հարցում: Օրինակ, նույն գազը ավելի՞ կթանկանա, թե՞ ոչ, Պուտինն ընտրություններից առաջ նման մեթոդների կգնա՞:

- Իհարկե, անկասկած: Եվ ջուր կլցնի թուրք-ադրբեջանական տանդեմի ջրաղացին, եւ Մատվիենկոն, եւ Օվերչուկը, ինչպես միշտ, կգովաբանեն Ադրբեջանը, որն անօդաչուներ կարտադրի, որոնք կթռչեն ռուսական օբյեկտների ուղղությամբ: Այսպիսին եմ ես տեսնում իրավիճակը: Ռուսաստանն առայժմ ունի բավական լծակներ, բայց այդ լծակների գործողությունն էլ է սահմանափակ եւ ավարտվելու, որովհետեւ վերջին հաշվով դա կնշանակի, որ հայկական իշխանությունը, անկախ նրանից, թե ինչպիսին այն կլինի, եւ ով կհաղթի հունիսին՝ ընտրություններում, ստիպված կլինեն հաշվի առնել դա եւ նվազեցնել ռուսական ակտիվների քանակը Հայաստանում:

- Իսկ Դուք նկատե՞լ եք՝ Փաշինյան-Պուտին հանդիպումից հետո Հայաստանի հանդեպ կա՞մ ավելի կոշտ վերաբերմունք, թե՞ ոչ:

- Մեդիայում չեմ նկատել: Առհասարակ, հայկական թեման մեր մեդիայում միշտ բավականին փակ թեմա է: Այն հիմնականում աշխատում են չշոշափել: Բայց բուն հանդիպումը լուսաբանում էին կրեմլյան ռեժիմում: Կարծում եմ, որ իրականում ամեն ինչ շատ ավելի բարդ էր, եւ այդ հանդիպման դրամատուրգիան շատ հետաքրքիր էր եւ պետք է ուսումնասիրության առարկա դառնա: Առաջին անգամ, համենայնդեպս, ես դա տեսա՝ Փաշինյանն իր տեքստը կարդում էր թղթից, հավանաբար, այդ տեքստն ինչ-որ մեկի հետ համաձայնեցված էր: Եվ երեւում էր, որ Պուտինը, իր ողջ զսպվածությամբ եւ փորձառությամբ հանդերձ, այդ հանդիպման ընթացքում իրեն կոմֆորտ չէր զգում:

ԵԹԵ ԱՅՑԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԼԻՆԵՐ, ՄՈՒՍՏԱՖԱԵՎՆ ԱՌՆՎԱԶՆ ՄԻ ՔԱՆԻ ՌԱԶՄԱԳԵՐԻ ԿԲԵՐԵՐ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ադրբեջանի պատվիրակությունը՝ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի գլխավորությամբ, երեկ ժամանել էր Երեւան: Այս մասին տեղեկացանք նախ ադրբեջանական ԶԼՄ-ներից, ապա ՀՀ ԱԳՆ-ն ստիպված եղավ հաստատել: Իմացանք, որ պատվիրակությանը տեղափոխող ինքնաթիռը վայրէջք է կատարել «Զվարթնոց» օդանավակայանում: Փոխվարչապետ Մուստաֆաեւը շտապել է Աղվերան՝ հայ գործարարների հետ հանդիպման, եւ ցանկություն է հայտնել այցելել իր ծննդավայր՝ Նոյեմբերյանի Ջուջեւան գյուղ: Ավելի ուշ տեղեկացանք, որ սահմանազատման հանձնաժողովի նիստ է կայացել: Զրուցել ենք ադրբեջանագետ **Տաթեւիկ Հայրապետյանի** հետ:

- Ինչո՞ւ է Շահին Մուստաֆաեւը, ըստ Ձեզ, Հայաստան ժամանել:

- Հստակ տեղեկություն դեռեւս չեն հայտնում ադրբեջանական լրատվամիջոցները, սակայն մի բան հստակ է՝ եթե այս այցը խաղաղության մասին լիներ, Շահին Մուստաֆաեւն իր հետ առնվազն մի քանի ռազմագերի կբերեր Հայաստան: Մնացածն ինչ-որ անհասկանալի «բազարներ» են, որոնց բովանդակությունից մենք տեղյակ չենք: Ոչինչ չեն հրապարակում դեռեւս կողմերը: Վստահ եմ, որ հայկական կողմից անգամ դիմավորել են նրան, սակայն չեն ուզում այդ մասին խոսել, հայտարարել, ցույց տալ: Նրանք նկատել են, որ հայ հասարակությունը բացասական ընկալումներ ունի այդ ամենի մասին, այդ պատճառով էլ որոշել են ցույց չտալ այդ ամենը:

- Ինչո՞ւ է ադրբեջանական կողմը դեռեւս լռում այս այցի մասին:

- Ադրբեջանական մեդիան աշխատում է հրահանգով: Նրանք դեռեւս չունեն տեղեկություն, վստահ եմ, հենց ունենան տեղեկություն, անպայման կհրապարակեն: Նրանք հրահանգավորված են աշխատում:

- Իսկ ի՞նչ եք կարծում՝ ո՞րն է այս այցի մոտիվը:

- Ինձ թվում է՝ սահմանազատման, սահմանագծման թեմաներով է այս այցը, ինչպես նաեւ՝ կարող է կապված լինել նախընտրական շրջանի հետ: Ադրբեջանն այս ընտրություններում աջակցում է Նիկոլ Փաշինյանին: Ի դեպ, Մուստաֆաեւն Ադրբեջանի ամենառացիոնալ կերպարներից է համարվում:

- Նիկոլ Փաշինյանը վերջերս հայ ժողովրդին սպառնաց պատերազմով՝ հայտարարելով, որ եթե ինքը բացարձակ մեծամասնություն չկազմի խորհրդարանում, աղետալի պատերազմ տեղի կունենա: Այս առումով ի՞նչ է ասում Ադրբեջանը:

- Ադրբեջանն ու Հայաստանը աշխատում են սինխրոն: Նույն սպառնալիքները նաեւ գալիս են ադրբեջանական կողմից, անգամ Ադրբեջանի իշխող ուժի պատգամավորներից մեկը վերջերս ասել էր, որ իրենց ընդունելի թեկնածուն Նիկոլ Փաշինյանն է: Երկու կողմի բառամթերքում էլ նույն բառերն են կիրառվում՝ «սեպտեմբեր» եւ «աղետաբեր պատերազմ»: Ադրբեջանն օգտվում է առիթից, որ Փաշինյանի կառավարման 8 տարիներին երեք պատերազմներն էլ տեղի են ունեցել սեպտեմբերին՝ 2020 թվականի պատերազմ, 2022 թվական՝ Ջերմուկի ներխուժում, 2023 թվական՝ Արցախի հայաթափում: Դրանք՝ բոլորը, տեղի են ունեցել սեպտեմբերին, եւ սեպտեմբերը պատահական չեն նշում: Հայ հանրությանը այդ բառերով հերթական տրավմայի են ենթարկում: Փորձում են այնպես անել, որ Փաշինյանը վերընտրվի՝ մարդկանց վախերի հաշվին:

- Արսեն Թորոսյանը Հ1-ի եթերում արդարացրել է հայկական եկեղեցիների ավերումն Արցախում, ասել է, որ Արցախն Ադրբեջանի սուվերեն տարածքն է, եւ Ադրբեջանն ինչ ուզի, կարող է անել իր տարածքում: Թորոսյանը, ըստ էության, վանդալիզմն արդարացնում է:

- Ավելի լավ է՝ ես հարյուր անգամ ադրբեջանցի պատգամավորներին լսեմ, քան մեկ անգամ՝ ՔՊ-ականներին: Նրանք գոնե, գիտենք՝ ադրբեջանցի են, իսկ ովքե՞ր են այս մարդիկ….

- Հայկական հոգեւոր, պատմամշակութային ժառանգությունը փաստացի ենթարկվում է վանդալիզմի, ի՞նչ է հնարավոր անել՝ այս առումով:

- Քրիստոնեական պատմամշակութային ժառանգություն է ավերվում: Պետք է համապատասխան կառույցների դիմել, պետք է հայտարարություններ արվեն: Օրինակ ես՝ առաջարկում եմ դիմել Հռոմի պապին: Աշխարհում՝ քրիստոնյա ժողովուրդների համար եկեղեցի քանդելը չի կարող նորմալ համարվել: Եթե այս ամենն օրինաչափ են դարձնում, վաղը կարող է ավելի վատ բաներ էլ անեն, չեմ ուզում ասել, թե ինչ եմ մտածում…. շատ ավելի վատ բաներ էլ կարող են անել:

ԶՐԿԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻՑ ԵՎ ՄԵԾԱՑՆԵԼ ՀԱՆՑԱՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ

Բազմաթիվ, այսպես կոչված, քաղաքական ուժեր եւ գործիչներ սպասում են ընտրություններին, որ փող աշխատեն, որովհետեւ ընտրությունները նրանց համար ոսկե ժամանակաշրջան են՝ փող աշխատելու համար ամենանպաստավոր պայմանները, այնպես, ինչպես սունկ հավաքողի համար՝ գարնանը տեղացած անձրեւը: Բոլոր ժամանակներում իշխանությունն օգտագործել է փոքր կամ մարդ-կուսակցություններին՝ քաղաքական դաշտում խառնաշփոթ եւ կեղծ բազմակարծություն առաջացնելու համար: Այդ կուսակցություններն ու դրանց ղեկավարներն էլ, ռեալ գնահատելով իրենց ունեցած հանրային աջակցության չափը, հասկանալով, որ իրենք որեւէ հնարավորություն չունեն հաղթահարելու անցողիկ շեմը եւ հայտնվելու խորհրդարանում, սիրով համաձայնել են կատարել իրենց վերապահված ֆունկցիան՝ մի աշխատանք, որն արդարացնում է իրենց գոյությունը՝ ապահովելով եկամուտ եւ բարեկեցություն:

Այն տեսակետը, որ փոքր կուսակցությունների մասնակցությունը ձեռնտու է նաեւ ընդդիմադիր կուսակցություններին, այնքան էլ հիմնավոր չէ: Ասվում է, որ, օրինակ, պրոիշխանական կուսակցությունների, ենթադրենք՝ «Հանրապետություն» կամ «Հանուն հանրապետության» կուսակցությունների մասնակցությունը չի խոչընդոտում ընդդիմության հաղթանակը, հակառակը՝ դրանց ձայն տվողները որեւէ պարագայում ձայն չէին տա «Ուժեղ Հայաստանին» կամ «Հայաստան» դաշինքին: Այսինքն, եթե նրանք անգամ ձայն են գողանում կամ փոշիացնում, ապա միայն պրոիշխանական էլեկտորատի ձայները: Առաջին հայացքից սա իսկապես տրամաբանական է հնչում: Այդ դեպքում ինչո՞ւ իշխանությունը, դրանց վրա ազդեցություն ունենալով, այնուամենայնիվ, թույլ է տալիս մասնակցել ընտրություններին, հնարավոր է՝ նույնիսկ խրախուսում է նրանց մասնակցությունը: Կա մի քանի պատճառ:

Երբ ընտրություններին մասնակցում է 3-4 կուսակցություն, որոնցից մեկն իշխանությունն է, իսկ մյուս երեքը ուժեղ ընդդիմադիր կուսակցություններ են, ընտրողի համար հեշտ է ընտրություն կատարել. նա կամ իշխանության կողմն է, կամ ընտրում է այդ 3 ընդդիմադիր կուսակցությունների միջեւ: Նախընտրական քարոզարշավն էլ ավելի հստակ է. կա իշխանություն, որը փորձում է վերարտադրվել, եւ կա ընդդիմություն, որը, դեմ լինելով վարվող քաղաքականությանը, փորձում է հեռացնել, փոխարինել իշխանությանը: Մինչդեռ երբ ընտրությանը մասնակցում է 19 կուսակցություն, նախընտրական պայքարը վերածվում է ժխորի, մասնակից կուսակցությունները քննադատում են ոչ միայն իշխանությանը, այլեւ հիմնական ընդդիմադիր կուսակցություններին, մեկին մեղադրում են նախկինում կատարած թալանի եւ ապօրինությունների, մյուսին՝ օլիգարխ ու ռուսական դրածո լինելու, երրորդին՝ գիտելիքներ եւ կառավարման փորձ չունենալու մեջ, եւ այսպես շարունակ: Սրանք ոչ թե կողմնորոշում են չկողմնորոշված ընտրազանգվածին, ինչպես իրենք են փորձում համոզել, այլ հակառակը՝ վանում են մարդկանց, համոզելով, որ մասնակիցներից ոչ մեկն արժանի չէ, որ բոլորն էլ նույնն են, ոչինչ էլ չի փոխվելու: Ու մարդկանց զրկում են ընտրությանը մասնակցելու մոտիվացիայից: Փոքր կուսակցությունները կատարում են այն կեղտոտ գործը, որը պետք է աներ իշխանությունը, բայցեւ աշխատում են իշխանության հետ համագործակցելով, աշխատում են երգչախմբի սկզբունքով, երբ թվում է, թե ամեն մեկը տարբեր ձայն է արձակում, բայց միասին կատարում են նույն երգը:

Մեծ թվով ուժերի մասնակցությունն իշխանության համար ունի ավելի կարեւոր նշանակություն, քան հիմնական քաղաքական մրցակիցներին վարկաբեկելն ու անվանարկելը կամ ընտրողներին մոտիվացիայից զրկելը: Դա իշխանության կեղծ հաղթանակն օրինականացնելն ու լեգիտիմացնելն է: Փաշինյանը դա արդեն փորձել է 2021 թվականի ընտրություններից հետո եւ կփորձի նույնը կրկնել նաեւ հիմա, եթե հաջողի: Հիշում եք, թե ինչ տեղի ունեցավ այդ ընտրություններից հետո. Փաշինյանը սկսեց հերթով ընդունել ընտրություններին մասնակցող, բայց ԱԺ չանցած քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, նրանց հետ տեսանկարահանվել, լուսանկարվել եւ այդ տեսարանները ակտիվորեն տարածել: Նույն Արամ Սարգսյանը, Արման Բաբաջանյանը, Լեւոն Շիրինյանը, Տիգրան Խզմալյանը, ներկայում թունդ ընդդիմադիր դիրքերից հանդես եկող Էդմոն Մարուքյանը կամ անհայտ պատճառներով իշխանությունից թաքնվող Տիգրան Ուրիխանյանը եւ էլի շատերը գնացին Փաշինյանի դուռը, սեղմեցին նրա ձեռքը, ճանաչեցին նրա իշխանության օրինականությունը: Փաշինյանը ստեղծեց արտախորհրդարանական կուսակցությունների խորհրդակցական ֆորմատ եւ պարբերաբար հանդիպում էր նրանց հետ՝ ցույց տալու, թե տեսեք՝ ինչ մեծ թվով կուսակցական գործիչներ են ճանաչում իմ իշխանության օրինականությունը եւ համարում են ինձ այնպիսի հեղինակություն, որ պատրաստ են պարբերաբար գալ եւ լսել իմ կարծիքը կամ իրենց կարծիքը փոխանցել ինձ:

Հիմա իրավիճակը Փաշինյանի համար ավելի կրիտիկական է լինելու, որովհետեւ, ի տարբերություն 2021 թվականի, երբ նա, ունենալով որոշակի հանրային աջակցություն, ընտրությունները կեղծեց վարպետորեն, հիմա դա անել չի հաջողվելու, որովհետեւ մի բան է, որ 30-35 տոկոսանոց վարկանիշդ դարձնես 50՝ կեղծելով 10-15 տոկոս, եւ լրիվ այլ, երբ պետք է 10 տոկոսանոց վարկանիշդ դարձնես 50: Պարզ է նաեւ, որ այս անգամ եթե Փաշինյանը գնա մասսայական կեղծիքի եւ խարդախության, իսկ այլ կերպ չի կարող լինել, հիմնական ընդդիմադիր կուսակցությունները չեն ճանաչելու ընտրությունների արդյունքները, դրանք համարելու են կեղծված եւ ոչ օրինական: Եվ հենց այդ ժամանակ է, որ այդ մանր ու ձայն չտարած կուսակցությունները մեկը մյուսի հետեւից շնորհավորելու են Փաշինյանին եւ նրա հաղթանակն օրինական են հայտարարելու:

Կարո՞ղ եք ասել, թե ինչ արժեք ունի մեկ կամ մեկ տոկոսից ցածր վարկանիշ ունեցող կուսակցությունների կարծիքը կամ շնորհավորանքը: Դա այնքան էլ այդպես չէ, որովհետեւ, երբ հայտարարվում է, որ ընտրությանը մասնակցած 19 կուսակցություններից ընդամենը երկուսը կամ երեքը չեն ճանաչում ընտրության արդյունքները, կամ որ ընտրության մասնակից 19 կուսակցությունից 12-ն արդեն ճանաչել են Փաշինյանի հաղթանակը եւ շնորհավորել նրան, դա ինչ-որ հանրային տպավորություն է ստեղծում: Իհարկե, դրանով իշխանության գործած կեղծիքը չի վերանում, բայց, ինչպես հայտնի անեկդոտում է ասվում, ինչ-որ նստվածք մնում է: Իշխանությունն այդ կուսակցություններից եւ դրանց ղեկավարներից ավելին չի էլ ակնկալում, ընդամենը ֆոն ապահովել, իր կատարած կեղծիքին մասնակից դառնալ ու դրանով իր կատարած հանցանքը լղոզել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿԱՐՄԻՐՆԵՐ ԵՎ ԿԱՊՈՒՅՏՆԵՐ

Շատերին թվում է, թե ՀՀ քաղաքացու նոր անձնագիր հնարելու պատճառն այս իշխանությունների՝ Արարատ լեռան սիմվոլիկայից հրաժարվելն է: Մինչդեռ Արարատ լեռան պատկերները մեր անձնագրերից հեռացնելն ընդամենը շարժառիթ է, որը ՀՀ իշխանություններին (ոչ վերարտադրվեն) թույլ կտա հետագայում ՀՀ քաղաքացիներին եւս մեկ անգամ պառակտել, այս անգամ՝ «կարմիրպասպորտավորների» եւ «կապույտպասպորտավորների»: Նրանք, որոնք կհամաձայնեն առանց Արարատի պատկեր կարմիր անձնագիր ունենալ, շատ արագ կփոխեն անձնագրերը, իսկ ես, որ չեմ ուզենա բաժանվել Արարատից, կմնամ իմ կապույտ անձնագրով: Եվ հենց այդ ժամանակ էլ Նիկոլը կգա (ոչ գա) ու անսխալ կորոշի, թե ով է իր «իրական» կողմնակիցը եւ ով՝ իրական հակառակորդը:

Պարզունակ բան եմ ասում, այնպես չէ՞: Բայց այս իշխանությունների ո՞ր քայլը պարզունակ չէ: Սրանք երբեւէ երկու քայլանոց կոմբինացիա իրականացրած կա՞ն: Է՛ն ամենասկզբում ասացին՝ մենք սպիտակ ենք, իսկ դուք՝ սեւ: Երբ տեսան, որ գեղեցիկ բան չստացվեց, սկսեցին մետրոյում նոր՝ Նիկոլի «անձնագրեր» բաժանել: Դարձյալ խայտառակվեցին: Մի աղջիկ պատռեց այդ ինքնագործ «անձնագիրն» ու շպրտեց Նիկոլի երեսին: Նիկոլի ծրագրած հիմար հանրաքվեն դրանով տապալվեց: Թե բա՝ կորոնան մեզ խանգարեց: Չէ-հա… Անցան տարիներ, պատերազմ եղավ, պարտություն, կապիտուլյացիա: 21 թվին էս Նիկոլը, որ մազից էր կախված, վերարտադրվեց, այսինքն՝ ժամանակավորապես փրկվեց պատերազմի, զոհերի եւ կապիտուլյացիայի համար պատասխանատվությունից: Ու միացրին «ժողովուրդն է մեզ ընտրել» ձայնապնակը: Երգեցին, երգեցին, բայց մի գեղեցիկ օր ենթարկվեցին նոր կապիտուլյացիայի եւ Արցախը հայտարարեցին Ադրբեջանի մաս: Դրանից հետո Արցախը հայաթափվեց: Բա ինչ անե՞նք… Նիկոլն ու իր պարզունակ թիմը, խուճապի մեջ, սկսեցին մեղավորների շքերթ ձեւավորել՝ ռուսներն են մեղավոր, ՀԱՊԿ-ն է մեղավոր, ՆԱՏՕ-ն է մեղավոր, ԵԱՏՄ-ն է մեղավոր, անգամ ԵՄ-ն է մեղավոր, որ իրենց չի ընդունում ԵՄ կազմ: Ի վերջո, իրենց ձախողումներին մի հիմար բացատրություն տվեցին, թե բա՝ Արցախը հանձնեցինք, որ Հայաստանը պահենք: Բերեց, հանրությանը մի «սլյուդայի» կտոր ցույց տվեց, թե՝ ծանոթացեք, սա է «իրական» Հայաստանի Հանրապետությունը: Ոչ ոք, բացի իր պարզունակ ենթականերից, առանձնապես չոգեւորվեց այդ «քարտեզից»: Եվ կրկին ՔՊ-ում օրակարգ մտավ յուրայիններին «օտարներից» զատելու հարցը: Պետք էր մի այնպիսի բան մտածել, որ հնարավոր լիներ նիկոլականներին զատել ոչ նիկոլականներից: Եվ հնարը գտան: Հայաստանի բրոշկա-քարտեզը… Ով դրանից խփեց դոշին՝ նիկոլական է, ով հրաժարվեց ու շպրտեց՝ հականիկոլական: Այսպես սկսվեց հանրությանը «քարտեզակիրների» եւ «անքարտեզների» բաժանելու գործընթացը: Դարձյալ մեկ քայլանոց պարզունակ օպերացիա, եթե նկատեցիք:

Հայաստանում խառը օրեր են: Պատրաստվում ենք ընտրությունների, իսկ Նիկոլն իր պարզունակ թիմով, ինչպես միշտ, պատրաստվում է վերարտադրվել: Հարց է առաջանում՝ ընտրություններից հաշված օրեր պակաս ինչի՞ էր պետք անձնագրերի հետ կապված այս օյինբազությունը: Ադրբեջանի աջակցությունը քիչ էր, մի հատ էլ Թուրքիայի՞ աջակցությունն ես ուզում ունենալ: Տեսեք-տեսեք՝ Արարատն այնպես ենք հանել ՀՀ քաղաքացու անձնագրից, որ Խոր Վիրապից անգամ չի երեւում: Լավ, բայց թուրքերն էլ հո քեզ նման միագիծ չե՞ն մտածում, չգիտե՞ն, որ Արարատը միլիոնավոր հայերի պատշգամբներից է երեւում, ու հնարավոր չէ Արարատի պատկերը թաքցնել: Կարծում ես՝ թուրքերը սահմանը կբացե՞ն՝ տեսնելով քո կարմիր անձնագրերը: Տես՝ չհիասթափվես:

Արի, քեզ ասեմ, որ ՀՀ քաղաքացիներին հերթական անգամ պառակտելու քայլ դարձավ արածդ: Ուղղակի պառակտեցիր մեր հանրությանը, բայց այս անգամ, բարեբախտաբար, ոչ երկար ժամանակով: Մինչեւ ընտրություններ հանրությունը կարմիր անձնագրի երես չի տեսնի, իսկ ընտրություններից հետո՝ առավել եւս: Իսկ եթե ՔՊ-ականներով, այնուամենայնիվ, հասցնեք կարմիր անձնագրեր ստանալ, դա արդեն մեծ հաջողություն կլինի ձեզ համար: Դուք արդեն անզեն աչքով էլ կտարբերվեք ՀՀ մնացած քաղաքացիներից:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՓԱՌՔ ԱՍՏԾՈ, ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ԱՅԴ ՄԱՐԴՆ ԱՅՆՏԵՂ Է, ՈՐՏԵՂ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

*«Հրապարակի» զրուցակիցը վրացի քաղաքագետ, պրոֆեսոր, քաղաքական գործիչ **Պետրե Մամրաձեն** է:*

- Երեկ վրացական մի շարք լրատվական կայքեր տեղեկատվություն հրապարակեցին այն մասին, որ ՀՀ վարչապետ Փաշինյանն իր վրացի գործընկերներին խոստացել է Վրաստանին հանձնել Ձիլիզա կոչվող հայկական գյուղը՝ սահմանազատման շրջանակներում: Որքանո՞վ է ճիշտ այդ տեղեկատվությունը, եւ ստեղծված տարածաշրջանային իրավիճակում ճի՞շտ է այսպես արագացված կարգով սահմանազատման գործընթաց անելը, թե՞ ճիշտ կլինի սպասել:

- Ես վստահ եմ, որ Վրաստանի եւ Հայաստանի իշխանություններն այս դեպքում անսխալ կգործեն՝ պահպանելով կայունությունը: Անկախության ձեռքբերումից հետո մենք այնպիսի հարաբերություններ ունենք, որ ոչ մի անգամ նման խնդիրներ չեն եղել, այդպես էլ կշարունակվի: Իսկ տարատեսակ կայքերում տարատեսակ հայտարարություններ կարող են հրապարակվել, այս ժամանակներում նման բաներից խուսափել հնարավոր չէ: Ցանկացած մարդ կամ մարդկանց խումբ կարող է սոցկայքերում հեղինակ լինել, էջեր բացել՝ ցանկացած ոճի ու բովանդակության, ու հրապարակել ինչ ուզում է. դրանից խուսափել հնարավոր չէ: Մենք մեծագույն ու մեծաքանակ հուշարձաններ ունենք, որ այժմ Թուրքիայի տարածքում են, բայց նման բաների մասին հիմա խոսելը կնշանակի հարվածել ինքդ քեզ, լինել ինքդ քո թշնամին: Մենք գիտենք, թե ինչպես ավարտվեց ու երբեք չի ավարտվի արցախյան ողբերգությունը: Հենց հիմա կարդում էի, որ Արցախում ոչնչացրել են քրիստոնեական երկու եկեղեցի, հասկանալի է, որ այլկերպ չէր էլ կարող լինել: Տարիներ շարունակ հակընդդեմ կարծիքներ են հնչել: Ես հիշում եմ, որ Հայաստանի յուրաքանչյուր նախագահ, ով ընտրվում էր այդ պաշտոնին, նաեւ Թբիլիսի այցելության ընթացքում հայտարարություն էր անում, որ այն հայը, որը կհայտարարի, որ Վրաստանի տարածքում կան հողեր, որ Հայաստանին են պատկանում, նրանք հայ ժողովրդի թշնամիներն են, առաջին հերթին: Ես ցիտում եմ այս խոսքերը, ընդ որում՝ նաեւ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց այդ մասին Վրաստանի օպերային թատրոնում եւ դրանից առաջ ու հետո… Դա ճիշտ ու անհրաժեշտ քաղաքականություն է Հարավային Կովկասի համար: Երբ առանձին մարդիկ հրապարակում են Աստված գիտի ինչ, դա նույնպես հասկանալի է, սակայն դա պետք է վերահսկել, գործողություններ ձեռնարկել եւ միշտ հայտարարությամբ հանդես գալ, որ դա ոչ մի դեպքում չի արտացոլում իշխող քաղաքական ուժերի եւ քաղաքական գործիչների քաղաքական կամքը՝ երկուստեք:

- Բայց Ձիլիզայի մասին տեղեկատվության հրապարակումից հետո վրացական լրատվամիջոցներում մեկ այլ հրապարակում էլ եղավ, որ հայկական կողմը հրաժարվում է վերադարձնել մեզ մեր հողերը, եւ հակահայկական տրամադրությունների բուռն ալիք սկսվեց:

- Անկախացումից ի վեր թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի կառավարությունների կողմից չեմ հիշում որեւէ մի այդպիսի հայտարարություն…

- Հնարավո՞ր է, որ ինչ-որ երրորդ կողմ փորձում է խնդիրներ ստեղծել մեր երկու պետությունների միջեւ:

- Շատ հնարավոր է, ով ասես, ինչ ասես՝ կարող է անել, որովհետեւ էլեկտրոնային մասմեդիան այն տարածքն է, որ դա հնարավոր է, ու այդ մասին մեծագույն մասնագետներն են գրում, որ եթե ժամանակին գրքի տպագրությունն իսկական էվոլյուցիա էր, երբ Գուտենբերգը հայտնագործեց տպագրող սարքը, ինչն ամբողջությամբ փոխեց սկզբում Եվրոպայի, իսկ հետո ամբողջ մարդկության կյանքը, ապա հիմա աշխարհն ավելի մեծ էվոլյուցիա է ապրում, երբ ամեն մարդ, անկախ իր տեսակետներից ու հոգեկան առողջության կարգավիճակից, կարող է ունենալ սեփական կայքն ու գրել ինչ ասես: Ես այնպիսի բաներ եմ կարդում… հիշում եմ՝ վրացական թերթերը Շեւարդնաձեին մեղադրում էին Բերինգի նեղուցն ամերիկացիներին վաճառելու մեջ, եւ սա տիպիկ օրինակ է: Ամենակարեւորը՝ պետք է ուշադրություն դարձնել, թե ինչպես է այդ լուրերին արձագանքում կառավարությունը: Իսկ լրագրողների մեծ մասը՝ ոչ բոլորը, ցիտում եմ, սենսացիան ավելի շատ են սիրում, քան հայրենիքը:

- Նայած որ լրագրողները՝ կա նաեւ դեղին մամուլ, որը մենք լրագրություն կամ ժուռնալիստիկա չենք համարում:

- Իհարկե, բայց նրանք շատ են:

- Ինչպեսեւ քաղաքականության մեջ շատ կան նման կերպարներ:

- Այդ կարգավիճակի ներկայացուցիչներ բոլոր ոլորտներում կան: Բնականաբար, նման տեղեկությունները շրջանառության մեջ են դնելու, բայց ամենակարեւորը կառավարության արձագանքն է: Իսկ թե կայքերում անընդհատ ինչ կլինի՝ դա երկրորդական է:

- Ինչպե՞ս եք գնահատում հայ-վրացական հարաբերությունները:

- Ես շատ ուրախ եմ, որ այս բոլոր տարիների ընթացքում, երբ ես նախագահ Շեւարդնաձեի նախագահության բոլոր տարիներին նրա նախագահական ապարատում էի աշխատում, եւ հիմա էլ, երբ արդեն 13 տարի լրացել է, ինչ «Վրացական երազանքն է» իշխանության, հենց այս քաղաքականությունը՝ հայկական ու վրացական կողմերից, ամբողջությամբ գերիշխող է: Եղել են շատ տհաճ պահեր, երբ նախագահ Սահակաշվիլին իրեն թույլ էր տալիս այնպիսի հայտարարություններ, որոնք անթույլատրելի էին երկրի նախագահի համար: Հիշեցնեմ. 2009 թվականին նա հայտարարեց, որ Հայաստանի տնտեսությունն ազատ անկման մեջ է հայտնվել: Ցիտում եմ՝ ասաց, որ Հայաստանի կառավարությունը չի կարողացել բարեփոխումներ իրականացնել, ի տարբերություն Վրաստանի, ինչի հետեւանքով Հայաստանի տնտեսությունն ազատ անկման մեջ է հայտնվել: Դրան հայկական կողմը, ՀՀ ԱԳՆ-ի մակարդակով, շատ զուսպ հայտարարությամբ պատասխանեց՝ ասելով, որ եթե նույնիսկ դա համապատասխաներ իրականությանը, ապա հազիվ թե ճիշտ է, որ բարեկամ երկրի նախագահը նման հայտարարություն անի: Իսկ ճշմարտությունն այն էր, որ այն ժամանակ՝ 2009-ին, Վրաստանում տնտեսությունը ոչ թե ազատ անկման մեջ էր, այլ մինուս էր: 2008-ին մենք ունեցանք պատերազմ՝ այդ սարսափելի ռազմաքաղաքական կատաստրոֆան, արկածախնդրությունը, որ Սահակաշվիլին բերեց, հետո շատ ծանր տարի էր: Ու հենց այդ ծանր տարվա ընթացքում, քո իսկ բերած արկածախնդրության ու աղետի պայմաններում, դու Հայաստանի մասին նման հայտարարություն ես անում: Էլի են եղել նման հայտարարություններ՝ ամբողջը սուտ եւ անընդունելի պահվածք, եղել է նման բան, եղել է ժամանակ, երբ Վրաստանի նախագահը նման բաներ էր անում: Բայց, փառք Աստծո, այդ ժամանակներն արդեն անցյալում են, իսկ այդ մարդն էլ այնտեղ է, որտեղ որ պետք է լինի՝ բերդում:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԿԳՄՍՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԲՈՅԿՈՏՈՒՄ Է ԴԻԼԻՋԱՆԻ ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԵՆԻ ՄՐՑՈՒՅԹԸ

*«Հրապարակի» զրուցակիցը ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի գրականագիտության գիտաշխատող, գրական քննադատ, գրական գործիչ **Ասկանազ Սարգսյանն** է:*

Հայաստանում հարյուրավոր պետական հանրակրթական դպրոցներ եւ տասնյակ քոլեջներ տնօրեն չունեն, ինչը բացասաբար է ազդում այդ կրթական հաստատությունների գործունեության վրա: 2025-ին հարցումներ կատարելով ԿԳՄՍ նախարարություն՝ տեղեկացել եմ, որ 2025թ. նոյեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում թափուր են 12 նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների պաշտոններ, 2025թ. սեպտեմբերի 23-ի դրությամբ հանրակրթական 303 դպրոցում տնօրենի հաստիքը թափուր էր, այդ դպրոցներում նշանակվել են տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարներ կամ պարտականությունը կատարողներ: Տավուշի մարզում ներկայում թափուր են Իջեւանում գործող Պատրիկ Դեւեջյանի անվան բազմագործառնութային քոլեջի եւ Դիլիջանի պետական բազմագործառնութային քոլեջների տնօրենների պաշտոնները: Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ մարզի հանրակրթական 8 դպրոցներում (Բերդի թիվ 1 հիմնական դպրոց, Թեղուտի միջնակարգ դպրոց, Իջեւանի թիվ 3 հիմնական դպրոց, Ոսկեվանի միջնակարգ դպրոց, Նավուրի միջնակարգ դպրոց, Չինչինի միջնակարգ դպրոց, Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց, Բերդի թիվ 3 հիմնական դպրոց) առկա է տնօրենի թափուր հաստիք:

Պետական կրթօջախներ կան, որոնք տարիներով տնօրեն չունեն: 2024 թ. մարտի 28-ի որոշմամբ, նույն տարվա հուլիսին կայացել է Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեում գործող «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ Դիլիջան քաղաքի Ուսանողական 74 հասցեում գործող «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միավորումը: Միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառնութային քոլեջ: Կառավարության որոշման մեջ որպես միավորման հիմնավորում նշվել է՝ ելնելով Դիլիջան քաղաքում սովորողների քանակի նվազեցման միտումից եւ ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օպտիմալ օգտագործման պահանջից: Դիլիջանի բազմագործառնութային քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նախկինում Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը: Անցած 2 տարում Դիլիջանի քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար բազմիցս մրցույթ է հայտարարվել, որին, որպես քոլեջի տնօրենի պաշտոնի հավակնորդ, մասնակցել է Վահագն Հովհաննիսյանը: Այդ մրցույթները չեն կայացել, քանի որ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել:

Ապրիլի 17-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Վահագն Հովհաննիսյանն ավելի քան 2 տարի Դիլիջանի պետական բազմագործառնութային քոլեջի տնօրենի պաշտոնակատարն է: 2024 թվականից մինչ այժմ քանի՞ անգամ է այդ քոլեջի տնօրենի մրցույթ հայտարարվել, քանի՞ անգամ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի մասնակցել այդ մրցույթներին, ինչո՞ւ չի մասնակցել»: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի պատասխանում նշված է. «Վահագն Հովհաննիսյանը 2024 թվականի մայիսի 21-ին նշանակվել է որպես «Դիլիջանի պետական բազմագործառնութային քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: 2025 եւ 2026 թվականների ընթացքում տնօրենի թափուր տեղի համալրման համար պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, որոնք չեն կայացել տարբեր պատճառներով: Ինչ վերաբերում է լիազոր մարմնի մասնակցությանը, ապա հարկ եմ համարում նշել, որ ներկայությունը հնարավոր չի եղել ապահովել աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով»: Նկատենք, որ մրցույթները չներկայանալով տապալելու պրակտիկան նոր չէ, եւ ԿԳՄՍՆ-ն դա հաճախ է կիրառում:

ԿԳՄՍ նախարարությունից չեն պատասխանել այն հարցին, թե 2024-2026 թվականների ընթացքում քանի անգամ է Դիլիջանի պետական բազմագործառնութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարվել, ինչ պատճառներով դրանք չեն կայացել: Եթե լիազոր մարմնի՝ ԿԳՄՍՆ-ի ներկայացուցչի մասնակցությունն աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով հնարավոր չի եղել ապահովել, ապա նախարարությունը կարող էր այլ ներկայացուցիչ ուղարկել այդ մրցույթին, եւ ինչ է նշանակում՝ «աշխատանքային ծանրաբեռնվածություն», երբ կրթօջախի կառավարման խորհրդի անդամությունն էլ է մտնում այդ աշխատանքային ծանրաբեռնվածության մեջ: Մինչդեռ շուրջ 2 տարի մրցույթը չի կայացել, եւ տնօրեն չի ընտրվել:

Մայքլ Ջեքսոնը՝ կինոյում

Համաշխարհային փոփ լեգենդ Մայքլ Ջեքսոնը թեեւ մահացել է 2009 թվականին, սակայն, որպես անձ եւ որպես երգիչ, դեռ շարունակում է մնալ հասարակության ուշադրության տիրույթում եւ ժամանակ առ ժամանակ հիշատակվում է մամուլի առաջին էջերում: Ինչպիսին էր Ջեքսոնը կինոյում եւ, առհասարակ, աուդիովիզուալ մշակույթում: Նա հանդես է եկել գեղարվեստական կինոնկարներում, երաժշտական ֆիլմերում, նրա մասին ֆիլմեր են նկարահանվել՝ խաղարկային գեղարվեստական կամ վավերագրական փաստագրական: Առաջինը The Wiz կինոնկարն է, որն էկրան է բարձրացել հեռավոր 1978 թվականին: Ջեքսոնը հանդես է եկել Scarecrow-ի կերպարում: Սա «Օզ. կախարդական աշխարհի» երաժշտական ադապտացիան է: Ջեքսոնն այստեղ ի ցույց է դրել իր պարային եւ դերասանական կարողությունները: Հաջորդը 1986-ին թողարկված Captain EO-ն է՝ կարճամետրաժ կինոնկար՝ նկարահանված Disney-ի համար: Նախագծում համադրված են երաժշտությունը եւ հատուկ էֆեկտները: 1988-ին արդեն էկրաններին հայտնվում է հիբրիդային երաժշտական Moonwalker կինոնկարը, որտեղ զուգորդված են սյուժետային դրվագներ եւ տեսահոլովակներ: Մասնագետներն այն հաճախ համարում են երաժշտական կինոյի էքսպերիմենտ: 1992-ին թողարկվում է Ջեքսոնների ընտանիքի եւ Մայքլի կարիերայի վաղ շրջանի մասին պատմող սերիալը՝ The Jacksons: An American Dream, 2002-ին արդեն անձամբ Մայքլ Ջեքսոնի կյանքին նվիրված կինոնկարը՝ Man in the Mirror: The Michael Jackson Story: Սպասվում է, որ այս տարի էկրան կբարձրանա Michael կինոնկարը, որը ներկայացնելու է Ջեքսոնի կարիերայի սկզբնական շրջանը: Վավերագրական կինոնկարները, որոնք նկարահանվել են փոփ-արքայի մասին, շատ են: Չենք թվարկի դրանք, սակայն ընդհանուր բնութագրով կասենք միայն, որ առանձին համերգային շրջագայությունների, դրանց նախապատրաստության, Ջեքսոնի ստեղծագործական կայացման եւ կյանքի ուղու մասին վավերագրական նկարահանումներ կան: Իհարկե, կան նաեւ ֆիլմ-հետաքննություններ, որոնք վերաբերում են արդեն այս կամ այն ասպեկտի հետաքննությանը: Հատկապես պետք է նկատել նրա մահվան հանգամանքների մասին պատմող ֆիլմ-հետաքննությունները: Ու եթե խաղարկային եւ գեղարվեստական կինոնկարները չեն գերազանցում 10-ը, ապա վավերագրական փաստագրական կինոնկարները 20-30-ն են, գուցե՝ մի փոքր ավելի շատ:

ԻՆՉ ԷԻՆ ԱՍՈՒՄ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ 30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՀՈՒՇԵՐ

Դատել էինք 1990 թվականը: Պատասխանատու եւ աննախադեպ ժամանակահատված էր: Ավարտվում էր երկրորդ հազարամյակը, մտնում էինք երրորդ հազարամյակ: Ի՞նչ մտորումներով ու խոհերով էին գնահատում այդ անցման ժամանակաշրջանը անվանի մտավորականները: «Կանչ» մանկապատանեկան թերթի խմբագրակազմն այն հրատարակեց առանձին ժողովածուով: «Դարավերջի դիմանկար» ժողովածուն դարձավ 278 մտավորականների հույզերով, տագնապներով, հույսերով լեցուն վավերագրություն:

30 եւ ավելի տարիներ անց վերընթերցելով 399 էջանոց ժողովածուն՝ խիստ այժմեական ենք նկատում Հայոց անկախ պետականության նկատմամբ ժամանակի հայ մտավորականների (գրողներ ու նկարիչներ, բժիշկներ ու երաժիշտներ, մանկավարժներ ու գիտնականներ, հասարակական, քաղաքական գործիչներ) ոգեւորությունն ու գուրգուրանքը, հարգանքն ու պատասխանատվությունը եւ այդ գործընթացին աջակից լինելու հանրության մղումը:

Թերեւս տեղին կլինի վերհիշել նրանց մտորումներից մի քանի պատառիկ.

- Մեր հայրենիքը դրախտավայր կդառնա ամեն մեկիս ջանքերով, յուրաքանչյուրիս անձնական պատասխանատվությամբ, իսկ մտահոգությունը մտահոգություն է այն ժամանակ, երբ հնարավոր է անել ճիշտ քայլ, բայց դանդաղում ես: **Տիգրան Լեւոնյան, 1996թ.**

- Եթե խոսում ենք թերություններից, պարկեշտություն ունենանք մեղքի մեր բաժինն էլ տեսնելու: Օտարի պես դատողություններ չանենք: Մենք ենք մեր հայրենիքի, մեր ճակատագրի տերը: **Երվանդ Ղազանչյան, 1996թ.**

- Ռոմանտիզմի եւ պրագմատիզմի զուգորդությունը պետք է միշտ ներդաշնակ լինի, եւ բացառվի որեւէ կողմի ճնշումը մյուս կողմի վրա: Մեկին շատ սիրելը, նվիրվելը ահավոր վտանգավոր երեւույթ է, ինչպես նաեւ՝ հակառակ երեւույթը: Ինձ անհանգստացնում է չափավորության խախտումը, այսինքն՝ շատ եվրոպականացումը, շատ շուկայացումը... Մեր փոքրիկ Հայաստանն էլ պետք է դառնա հնի եւ նորի հրաշք համադրության երկիր: **Արամ Մանուկյան, 1997թ.**

- Մեծ արագությունների երկիր չէ Հայաստանը: Արագությունը փոքրացնում է երկիրը: Հանդարտ ընթացքի դեպքում Հայաստանը մեծ Հայրենիք է: **Վանո Սիրադեղյան, 1999թ.**

- Հայրենիքը հիմնարկ չէ: **Աշոտ Նավասարդյան, 1997թ.**

- Դարավերջի հրաշքը մեզ՝ հայերիս համար բոլշեւիզմի փլուզումն էր, որ 70 տարի փաթաթվել էր մեր պարանոցին եւ դանդաղորեն խեղդում էր, փշրում մեր ոսկորները:

Սակայն ամենամեծ հրաշքը անկախությունն էր, մեր պետականության վերականգնումը, որ այսօր դանդաղ ու համառ կայանում է ու նվաճում աշխարհի համակրանքն ու հարգանքը: **Վարագ Առաքելյան, 1996թ.**

- 20-րդ դարի մեծագույն նվաճումն է նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ընթացքը: Ամբողջ աշխարհն է համոզված, որ կա այդ խնդիրը, եւ այն պետք է ստանա իր լուծումը: **Բաբկեն Արարքցյան, 1999թ.**

- Հաճախ մենք կորցնում ենք ինքներս մեզ: Աշխարհի համար դա գուցե այնքան էլ մեծ կորուստ չէ: Աշխարհի համար, ըստ էության, միեւնույն է, բայց մեզ համար դա ողբերգություն է, վերջ: **Անահիտ Թոփչյան, 1997թ.**

- Չհասկացա հազար ու մի կուսակցությունների անհրաժեշտությունն այս մինուճար երկրում, կործանումից փրկելու նրանց եռանդը չհասկացա... **Վրեժ Իսրայելյան, 1998թ.**

- Ուրեմն՝ աչքներս լույս, դեռ շատ գործ կա անելու երրորդ հազարամյակում: **Սուրեն Դանիելյան, 1999թ.**

- Մեզնից հետո տասնյակ սերունդներ, կարդալով այս տարիների պատմությունը, պիտի ասեն. «Երանի՜ ապրած լինենք նրանց ժամանակ»: **Աշոտ Սարգսյան, 1997թ.**

Պատշաճ համարեցինք ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ներկայացնել թատերագետ Լուիզա Սամվելյանի մտահոգություններով խոհերը՝ ասված 1996-ին: Այն մեր տագնապալից օրերում լուրջ մշակութային եւ խորը քաղաքական ենթատեքստով է հնչում:

Ահա Լուիզա Սամվելյանի խոսքը. «Մեր երկրում, իմ շրջապատում ինձ ամենից ավելի մտահոգում է ռոմանտիկայի պակասը: Այն գործարարությունը, նույնիսկ գործամոլությունը, որ այսօր համակել է շատերին, վտանգավոր է նրանով, որ ունի մեկ նպատակ, այն է՝ անձնական շահ, անձնական փառք, նաեւ՝ անձնական գործունեության ոչ համարժեք գնահատման ակնկալություն. իհարկե, խոսքը գերագնահատման մասին է: Եթե հայերի գոնե մեծամասնությունն իր կատարած աշխատանքի մեջ մի քիչ ավելի մտածեր ուրիշների մասին եւ ոչ թե միայն սեփական անձի, ապա թե՛ հոգեւոր, թե՛ նյութական բնագավառներում հայերն այսօր մեծ հաջողությունների հասած կլինեին: Բայց, դատելով արվեստի աշխարհում կատարվող բազմաթիվ երեւույթներից, հոգեւոր ասպարեզում ծառայող անձերից, ցավով տեսնում եմ, որ նրանց գերակշիռ մասը գործ ձեռնարկելիս նախեւառաջ մտածում է, թե դրանից ինքն անձամբ ինչ օգուտ կունենա: Մինչդեռ աշխարհի գրավոր պատմության շուրջ 6000 տարիները հաստատել են անվերանայելի մի ճշմարտություն, որեւէ գործ հասնում է կատարելության այն ժամանակ, երբ գործ կատարողը (կատարողները) աշխատելիս մոռանում է իր սեփական անձը, եկամուտը: Այդպես են ծնվում գլուխգործոցները արվեստի, գիտության մեջ:

Եթե իրերն իրենց անունով կոչենք, ապա արհեստի մեջ արվեստ, անշահախնդրության բաժին էլ պիտի լինի: Իսկ երբ մեծամասնությունն է նույն սկզբունքով գործում, համատարած առեւտուրը, անձնամոլությունն է իշխում:

Ռոմանտիկայի պակասից տուժում են առաջին հերթին ռոմանտիկայի հակված մարդիկ, այսինքն՝ նրանք, ովքեր աշխատում են խղճի մտոք: Բայց, վերջին հաշվով, տուժում են նաեւ գործարարները: Ուրեմն՝ չմոռանանք, որ հոգեբանության եւ մարդկային գործունեության գլխավոր՝ «Գործել ոչ միայն իր համար, այլեւ՝ ուրիշների», օրենքը խախտելը անպատիժ անցնել չի կարող: Թող ամեն հայ՝ պատանի, թե տարեց, իր մասնագիտությանը հարմարեցնի հանճարեղ արվեստագետ Կոնստանտին Ստանիսլավսկու հանրահայտ ասույթը. «Սիրիր արվեստը քո մեջ եւ ոչ թե քեզ՝ արվեստի մեջ»»:

Արամայիս ԱՍԼԱՆՅԱՆ

ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅ, ՈՐՊԵՍ ԱԶԳ, ԻՆՉ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ

Ախիթարյան հայրերից Օգոստինոս Սեքուլյանի մտորումները, թե ով ենք մենք՝ որպես հայ եւ որպես ազգ, այսօրվա քաոսային իրավիճակում արժանի են վերընթերցման:

««Ազգ» գաղափարը մարդկության մեջ ինքնագիտակից մշակույթով զարթոնքի շեշտված պտուղն է: Հայը Ժողովուրդ էր՝ հնդեվրոպական մեծ ցեղի մեջ մեկ ճյուղավորումը միայն, սակայն «ազգ» դարձավ իր մշակույթով, մանավանդ՝ երբ իր լեզուն զարգացրեց ու ունեցավ իր սեփական գիրն ու գրականությունը: Ու դարերի հոլովույթում մնաց ազգ՝ ի հեճուկս բոլոր օտար եւ այլազգի բիրտ հորդաների:

Այսօր մենք ցեղ ու ժողովուրդ չենք միայն, այլ առավելապես ազգ ենք, քանի որ ունենք մեր սեփական ազգային լեզուն, մեր սեփական գիրը եւ մեր պանծալի մշակույթը: Եվ քանի որ որեւէ ժողովուրդ, հավաքականություն միայն իր սեփական մշակույթով, լեզվով կարող է ազգ կոչվել, ուրեմն մենք որպես մարդ, կարող ենք հայ ազգին պատկանել այնքան ժամանակ, քանի դեռ մեր շուրթերից հնչում է մեր ազգային լեզուն՝ հայերենը: Եվ երբ մեր սքանչելի լեզվից հրաժարվենք, սկսենք խոսել միայն օտար լեզվով, ապա կդադարենք հայ ազգի զավակ լինել եւ կդառնանք միայն ծագումով հայ, բայց մասնիկը մարդկային խառնափնթոր բազմության:

Այսօր ազգն ու ազգայինը ջնջելու շեփորահարում կա, այն մտայնությամբ, թե միայն այդ ժամանակ կարող է աշխարհի վրա իրական խաղաղություն լինել, երբ իսպառ աշխարհի երեսից վերացած լինեն ազգերը՝ իրենց ինքնահատուկ լեզվով ու այլազան հատկանիշներով: Խաղաղությունը, սակայն, հոգեկան ազնվության արգասիքն է, իսկ այլազանությունը՝ բնության գեղեցկությունը:

Մեր բազմաբյուր նահատակներից նվիրական ավանդ ունենք, վեհ պարտավորություն՝ մնալու միշտ ազնիվ, ինքնագիտակցված մաքուր հայ քրիստոնյա: Ու այս համոզումը պարտավոր ենք փոխանցել սերունդներին»:



Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՆՑԱՎՈՐ «ՍԽԱԼՆԵՐԻ» ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ. ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԱՂԲԱՎԱՅՐ, «ՆԱՒՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆ

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Հայաստանում նույնիսկ Քրոջով նախատեսված հանցագործություն կատարողների նկատմամբ է պատիժը միշտ եղել ընտրողաբար:

Եթե այդ անձը հասարակ մարդ է, դատապարտվում է, եթե ոչ՝ ձեւականորեն է պատասխանատվության ենթարկվում: Ինչ վերաբերում է հանցավոր որոշումներ կայացնելու հետեւանքով երկրին եւ քաղաքացիներին ահռելի, անդառնալի վնաս պատճառած պաշտոնյաներին, ապա նրանք մնում են անպատիժ:

Հեռու չգնամ: Պատմեմ այն, ինչին 45 տարի առաջ անձամբ եմ վկա եղել: Իմ ազգականներից մեկը պարտքով մեծ գումար էր տվել մեկ այլ ուսանողի՝ պայմանով, որ այդ պարտքն ամեն ամիս արագ աճելու է: Պարտապանը չէր կարողացել վերադարձնել պարտքը, եւ ազգականս պարտքը վերադարձնելու օրիգինալ ձեւ էր առաջարկել: Նրանք Կոմպոզիտորների միության շենքի բնակելի հատվածի ձեղնահարկով մտել էին Միություն, այնտեղից դուրս բերել շուրջ 10 հազար ֆունտ ստերլինգ արժողության ապրանք, բայց... բռնվել էին հանցագործության վայր ձեղնահարկում: Հայրս՝ Գեւորգ Էմինը, այդ ժամանակ Մոսկվայում էր: Շտապ վերադառնալով տուն՝ նա դիմել էր Երեւանի քաղկոմի ղեկավար Լեոնիդ Ներսիսյանին, որն իր հերթին դիմել էր գլխավոր դատախազ Սուրեն Օսիպովին: Այդ գողությունը ձեւակերպել էին որպես երկու ուսանողների կողմից կատարված անհաջող կատակ ու մեղավորներին, որոնք արդեն իսկ խոստովանական ցուցմունքներ էին տվել, բաց էին թողել Սովետաշենի բանտից: Դրան նպաստել էր այն, որ հորս խնդրանքով երկու հայտնիներ, որոնք ոչ միայն Կոմկուսի անդամի, այլ նաեւ պատգամավորի կարգավիճակ ունեին, հանդես էին եկել որպես երաշխավոր: Մեկը Վարդգես Պետրոսյանն էր: Ի դեպ, ՀԳՄ նախագահը ոչ միայն երաշխավորագիր էր գրել, այլ նաեւ անձամբ էր ներկայացել Սովետաշենի բանտ, չնայած պետք է մեկներ Միացյալ Նահանգներ՝ կազմակերպելու Վիլյամ Սարոյանի աճյունը Հայաստան տեղափոխելու առաքելությունը:

Մինչդեռ Էդվարդ Միրզոյանը, որը նույնպես բնակվում էր ԿՄ շենքի բնակելի հատվածում, մերժել էր հորս խնդրանքը. այն է՝ վկայություն տալ, թե, իբր, գողացվածը ոչ թե ԿՄ ապրանքն է եղել, այլ՝ իր սեփականը: Կոմպոզիտորների միության նախագահն ասել էր. «Էմին ջան, այդ դեպքում կստացվի, որ ես եմ գողը»: Բացատրեմ, որ Սովետմիությունում պետությունից գողություն անողը շատ ավելի խիստ պատիժ էր ստանում, քան մասնավոր անձից գողացողը:

Եթե Հայաստանում հանցագործություն կատարելու պահին բռնված «թիկունք ունեցողները» չեն պատժվում, ապա պետք չէ զարմանալ, որ չեն պատժվում նաեւ բարձր պաշտոններ զբաղեցնողները, որոնց հանցագործությունն «ընդամենը» այն է եղել, որ ինչ-ինչ նկատառումներից ելնելով՝ ընդունել են այնպիսի հանցավոր որոշումներ, որոնց հետեւանքով ահռելի ու անդառնալի վնասներ են կրել պետությունն ու քաղաքացիները:

ՀՀ պատմության ընթացքում այդպիսի փաստերը բազմաթիվ են: Դրանցից մեկը Նուբարաշենի աղբավայրում աղբի վերամշակման գործարան կառուցելու ճապոնական ընկերություններից մեկի առաջարկի մերժումն էր, ինչի մասին շատ էին գրում այն օրերի լրատվամիջոցները: Հիշեցնենք, որ այդ ընկերությունն առաջարկել էր անվճար կառուցել այդ գործարանը՝ պայմանով, որ աղբի վերամշակումից առաջացած բիոգազը պատկանի իրեն: Այսինքն, Երեւանը կստանար անվճար գործարան, որը կփրկեր նրա բնակիչներին Նուբարաշենի գարշահոտ աղբանոցից, որում տեղի ունեցող հաճախակի հրդեհումների ծուխը խաթարում է երեւանցիների կյանքը: Ճապոնացիները ստացել էին մերժում, եւ այդ գազը՝ գարշահոտության եւ ծխի հետ մեկտեղ, տասնամյակներ շարունակ ապականում է Երեւանի օդային տարածքը: Օրերս այդ վնասին ավելացավ եւս մեկը. բիոգազի պայթյունի հետեւանքով ծանր այրվածքներով հիվանդանոց էին տեղափոխվել Նուբարաշենի աղբավայրի տնօրենն ու նրա աշխատակիցներից մեկը:

Այն օրերի լրատվամիջոցները ճապոնացիներին տրված մերժումը բացատրում էին նրանով, որ գոյություն ունի թաքնված բիզնես, երբ բազմաթիվ ներգրավված անձինք զբաղված են աղբի տարանջատման աշխատանքով: 1970-ին այդպիսի՝ այն օրերին չափազանց տարօրինակ թվացող բիզնեսի մասին հիշատակել էր հայրս՝ Գեւորգ Էմինը, որը վերադարձել էր Միացյալ Նահանգներ կատարած իր երկարատեւ ուղեւորությունից եւ պատմել էր, որ զբաղվելով այդ բիզնեսով, Ամերիկայում բնակվող հայազգի երեք եղբայրներ ... դարձել են միլիոնատերեր: Նշենք, որ աղբն այն օրերին անվանում էին «զիբիլ», դրա հավաքողներին՝ «զիբիլչի», եւ անհավատալի էր թվում, թե հնարավոր է մեծ եկամուտներ ստանալ այդ գործունեությունից:

Վերադառնալով Երեւանի պրոբլեմին նշեմ, որ ճապոնացիներին մերժողը չէր պատժվել իր ընդունած, մեղմ ասած, տարօրինակ որոշման համար:

Մինչ օրս հանրությունը չգիտի նույնիսկ այդ մերժման հեղինակին: Չգիտենք նաեւ, թե ով է մերժել արհեստական կաուչուկ արտադրող «Նաիրիտ» գործարանն ամերիկյան աշխարհահռչակ «Դյուպոն» կորպորացիային վաճառելու առաջարկը:

Հիշեցնենք, որ ամերիկյան այդ ընկերությունն անկախացած Հայաստանին առաջարկել էր գործարանը վաճառել իրեն, բայց ստացել էր մերժում: Հանրությանը բացատրել էին, թե, իբր, «Դյուպոնը», լինելով «Նաիրիտի» մրցակիցը, իսկույն եւեթ կփակի այն: Մինչդեռ մասնագետները դա բացառում էին՝ ասելով, թե մեր ցածրորակ կաուչուկը չի կարող մրցակից դառնալ ամերիկացիների արտադրանքին: Արդյունքում «Նաիրիտ» գործարանը փակեց ոչ թե «Դյուպոնը», այլ ... մերոնք: Փակեցին՝ թալանելուց, «Նաիրիտի» անունով տասնյակ միլիոնավոր դոլարների վարկեր վերցնելուց եւ դրանք մսխելով գործարանը պարտքերի մեջ թաղելուց ու սնանկացնելուց հետո: Մինչդեռ, եթե «Դյուպոնի» առաջարկն ընդունեինք, կստանայինք այն տարիների Հայաստանին օդի եւ ջրի պես անհրաժեշտ հարյուրավոր միլիոն դոլարներ, «Նաիրիտը» մինչ օրս կաշխատեր ու եկամուտ կբերեր, չէին փակվի՝ կշարունակեին աշխատել բազմաթիվ այլ գործարաններ, որոնց գործունեությունը փոխկապակցված էր «Նաիրիտի» հետ, քիմիական շատ ապրանքներ Հայաստանը ոչ թե ստիպված կլիներ ներմուծել՝ ծախսելով արտարժույթ, այլ հակառակը, կարտահաներ՝ ստանալով վալյուտա, հազարավոր մարդիկ չէին դառնա գործազուրկ: Հայաստանն էլ չէր դառնա արդյունաբերությունից զուրկ պետություն, որի հույսն այն է, թե քանի զբոսաշրջիկ կցանկանա այցելել ՀՀ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 30.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԶԵԼԵՆՍԿԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԷՐ, ՇՈՒՏՈՎ ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ապրիլի 23-ին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին Ադրբեջան էր այցելել: Այցը, ըստ պաշտոնական տեղեկատվության, եղել է պաշտոնական: Բաքվում այդ այցի ընթացքում հնչեց հայտարարություն, որ Ադրբեջանը պատրաստ է դառնալ ռուս-ամերիկյան բանակցությունների վայր եւ հյուրընկալող երկիր: Դա մի ֆորմատ է, որն արդեն կիրառվել է Թուրքիայում եւ Շվեյցարիայում: Հնարավոր է, որ Ադրբեջանն էլ առաջիկայում այդ երկխոսության շարունակման համար հարթակ դառնա: Այցի շատ դրվագներ պարզապես կարելի է համարել քարոզչական էֆեկտի համար արված: Հենց այցն իսկ արդեն քարոզչական բնույթի կարելի է համարել, քանի որ վերջին անգամ Զելենսկին Բաքու այցելել էր 2019 թվականին: Կիեւը հիմա կարծես թե սկսել է հետաքրքրություն ցուցաբերել Արեւելքի հանդեպ: Այցերի աշխարհագրությունը դա է վկայում՝ Թուրքիա, Սիրիա, Սաուդյան Արաբիա եւ Ադրբեջան:

Բաքուն այն երկիրն է, որը նպատակ չի դնում անդամակցելու ո՛չ ՆԱՏՕ-ին, ո՛չ Եվրամիությանը: Սակայն փորձում է բալանսավորել իր արտաքին քաղաքականությունը՝ հատկապես դա որպես հակակշիռ օգտագործելով Ռուսաստանի հետ հարաբերությունների ներկայիս փուլում, երբ Մոսկվա-Բաքու հարաբերությունները դեռ նոր-նոր են հաղթահարում «սառեցվածության փուլը»: Զելենսկու այցից մեկուկես շաբաթ առաջ Մոսկվան եւ Բաքուն արտաքին քաղաքական գերատեսչությունների մակարդակով համատեղ հայտարարություն տարածեցին՝ ռուս-ադրբեջանական հարաբերությունների փորձաքար դարձած AZAL-ի խոցված օդանավի հետ կապված: Երկուստեք ընկալում կա, որ հարաբերությունները պետք է նորմալանան: Սակայն Իլհամ Ալիեւը կարծես փորձում է առիթն օգտագործել՝ հավելյալ ինչ-որ բանի հասնելու համար, եթե դրա հնարավորությունը կա, եւ հյուրընկալել է Ուկրաինայի նախագահին նաեւ այդ հաշվով: Թե իրականում Բաքուն ինչ նպատակներ ունի, դժվար է ասել: Ամեն դեպքում, փորձագետները միանշանակ չեն իրենց դիրքորոշումներում, եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանը փորձում է լավ հարաբերություններ ունենալ թե՛ Իսրայելի եւ թե՛ Թուրքիայի հետ, չնայած Իսրայել-Թուրքիա հարաբերություններում եղած լարվածությանը, եւ այդպես շարունակ: Հնարավոր է, որ սա ուղղակի բալանսավորված արտաքին քաղաքականության կուրսի համատեքստում է պետք դիտել, հնարավոր է, որ կան «մեսիջներ», որոնք ուղարկվում են համապատասխան հասցեատերերին, հնարավոր է, որ այս ամենով Բաքուն փորձում է իր «դիվիզիոնը» բարձրացնել: Ցույց կտա ժամանակը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am